


Queer Memory in Armenia



Քվիր
հիշողությունը
Հայաստանում

Queer
Memory
in Armenia

Քվիր
հիշողությունը
Հայաստանում

Queer Memory in Armenia

Editors:

Mariam Yeghiazaryan
Arsen Abrahamyan
Tigran Amiryan

Cover design and illustrations:

Harutyun Tumaghyan

Layout designer:

Klim Grechka

Translators of the English version:

Mariam Harutyunyan
Mariam Yeghiazaryan

Proofreader and the editor

of the English version:

Arsen Abrahamyan

This publication has been carried out by the Cultural and Social Narratives Laboratory (CSN Lab) NGO, with the support of Pink and Sweden.

The content of the publication is the sole responsibility of Cultural and Social Narratives Laboratory NGO and can in no way be taken to reflect the views of Sweden and/or Pink.

Yerevan 2023

© CSN Lab, 2023

Queer Memory in Armenia,
ed. by Mariam Yeghiazaryan,
Arsen Abrahamyan, Tigran Amiryan

Քվիր հիշողությունը Հայաստանում

Խմբագիրներ՝

Մարիամ Եղիազարյան
Արսեն Աբրահամյան
Տիգրան Ամիրյան

Նկարագարողուհիները՝

Հարություն Թումաղյանի

Դիզայնը և էջադրումը՝

Կլիմ Գրեչկայի

Սրբագրիչ՝

Թագուհի Սուսիկյան

Անգլերեն տարբերակի թարգմանություն՝

Մարիամ Հարությունյան
Մարիամ Եղիազարյան

Սրբագրում և խմբագրում՝

Արսեն Աբրահամյան

Հրատարակումը իրականացնում է «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա» ՀԿ-ն՝ Pink Armenia-ի և Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ:

Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության և/կամ Pink Armenia-ի տեսակետները:

Երևան 2023

© CSN Lab, 2023

Քվիր հիշողությունը Հայաստանում,
խմբ.՝ Մարիամ Եղիազարյան, Արսեն
Աբրահամյան, Տիգրան Ամիրյան



Շվեդիա
Sverige

pink
ARMENIA



CULTURAL
& SOCIAL
NARRATIVES
LABORATORY

	<i>Foreword</i>	4
Defining the defined and the indefinite		12
Words instead of conversation		20
Digitalization of queer memory		30
Colour TV — monochrome broadcast		40
The inevitability of music and variety		48
How did shrinking screens lead to increased freedom?		54
Literature left outside of the textbooks		58
Blown up silence		64
The liberating phenomenon of electronic music		72
Queer spaces: out of sight, in front of all		78
	<i>Afterwards</i>	84

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<i>Ներածական խոսք</i>	5
Սահմանելով սահմանվածն ու անսահմանելին		13
Բառեր՝ զրույցների փոխարեն		21
Քվիր հիշողության թվանշանացում		31
Գունավոր հեռուստացույց՝ միագույն էթեր		41
Երաժշտության և բազմազանության անխուսափելիությունը		49
Թե ինչպես էկրանի փոքրացումն ազատության մեծացման բերեց		55
Դասագրքերից դուրս մնացած գրականություն		59
Պայթեցված լռություն		65
Էլեկտրոնային երաժշտության ազատագրող ֆենոմենը		73
Քվիր տարածքներ. բոլորի աչքից հեռու, բոլորի աչքի առաջ		79
	<i>Վերջաբան</i>	85

Our identities are the reservoir of our past and experience. Meanwhile, memory is the main foundation of identity.

Մեր ինքնությունը անցյալի և փորձառության
ամբարն է: Հիշողությունը ինքնության
գլխավոր հենքն է:

It is important to understand that history and the official narratives of historical discourse are the ones that often speak about the past. These narratives are usually built as a continuous line of events, which reconstruct the past of prominent **people, heroes, victories, and defeats.** **History is normally state-owned,** it belongs to everyone and to no one at the same time, while memory is fragmentary, it is a fragile phenomenon responsible for an individual past. Even when we talk about collective memory, we always mean representations of the past, which belong to the collective of individuals but not to historical discourse.

It is difficult to imagine the same continuity of memory as of history. Researchers of individual and collective memory have well demonstrated that, unlike the historical narrative that totally envelops our life and our knowledge, memory is a part of our being that requires lots of effort, that is an active work on memorizing, recollecting images and events of the past, which were distanced from us by natural forgetting, but which still live in our minds and trouble us until we articulate them and bring them to light. As Aleida Assman writes, sometimes it is very difficult to bring out the layers of our memory deeply hidden, since the trauma is an obstacle to the dialogue between the present and these segments of our past: "Such memories are too painful or embarrassing to come to the surface of consciousness without help [1]." Starting this research project, it seems like we have taken on the role of such a helping hand, an interlocutor that makes it possible to look through the veil of traumatic experience into the depths of memory, that is, into the space where identity is formed.

Our previous experience with oral history and memory has already proved that often individual memory remains superseded by official narratives that cover our consciousness through the **incessant media flow or political speech.** The ideas about the past shared by people frequently are not part of their personal experience and are in no way connected with their lives; they are "alien", they are media prostheses that replace memories of real experience. And only with the help of complex work, dialogue, and conversation, the thing that experts call an in-depth interview, we suddenly learn about a completely different, unique experience, nothing like the common clichés of the past.

Hence, memory, in particular individual memory, is often replaced by historical "story", media clichés, and political discourse. Dealing with such a complex phenomenon as queer memory becomes doubly difficult, since queer people are initially marginalized, being squeezed out of the heteronormative society, and queer memory is squeezed out as well, under the pressure of large historical narratives. The main objective of this research project was an attempt to understand queer

Ինչպես գիտենք, անցյալի մասին հաճախ խոսում է պատմությունը՝ պատմական դիսկուրսի պաշտոնական նարատիվները: Սովորաբար այս պատումները կառուցվում են իրադարձությունների գծայնությամբ՝ վերակառուցելով հայտնի մարդկանց, հերոսների, հաղթանակների և պարտությունների անցյալը: **Պատմությունը հիմնականում պետական է**, այն պատկանում է բոլորին, բայց մինևնույն ժամանակ ոչ մեկին, իսկ հիշողությունը հատվածական է, այն փխրուն երևույթ է, որը պատասխանատու է անհատական անցյալի համար: Նույնիսկ հավաքական հիշողության մասին խոսելիս միշտ նկատի է առնվում անցյալի այն ներկայացումները, որոնք պատկանում են անհատների խմբին, բայց ոչ պատմական դիսկուրսին:

Դժվար է պատկերացնել հիշողության նմանօրինակ անանջատ, մոնումենտալ և ավարտուն ամբողջականություն, ինչը բնորոշ է պատմությանը: Անհատական և հավաքական հիշողության հետազոտողները լավագույնս ներկայացրել են, որ ի տարբերություն պատմական նարատիվի, որն ամբողջությամբ պարուրում է մեր կյանքը և գիտելիքները, հիշողությունը մեր էության այն մասն է, որը պահանջում է ակտիվ աշխատանք՝ վերհիշելու և վերադարձնելու անցյալի պատկերներն ու իրադարձությունները, որոնք թեև հեռացել են բնական մոռացության պատճառով, բայց և շարունակում են ապրել մեր մտքում և անհանգստացնել մեզ՝ ստիպելով բացահայտել և հողավորել իրենց:

Ինչպես գրում է Ալեյդա Ասմանը, երբեմն շատ դժվար է դուրս բերել մեր հիշողության խոր թաքնված շերտերը, քանի որ ներկայի և անցյալի պատասխանների խոստովանություն խոչընդոտ է տրավման. «Նմանօրինակ հիշողությունները չափազանց ցավոտ կամ ամոթալի են, որպեսզի առանց արտաքին օգնության դուրս բերվեն գիտակցության մակերես» [1]: Ձեռնարկելով այս հետազոտական նախագիծը՝ մենք կարծես ստանձնել ենք հենց այդ օգնականի, զրուցակցի դերը, որը թույլ է տալիս տրավմատիկ փորձառության վարագույրի միջով նայել հիշողության խորքերը՝ ինքնության ձևավորման տարածությանը:

Բանավոր պատմության և հիշողության հետ կապված մեր նախկին փորձն արդեն ցույց է տվել, որ հաճախ անհատական հիշողությունը փոխարինվում է պաշտոնական նարատիվներով: **Չդադարող քաղաքական և մեդիա խոսքի հոսքերը** հեղեղում են անձնական փորձառության տարածությունը՝ խլելով և մոռացության մատնելով նույնիսկ այդ փորձառության մասին խոսելու լեզուն: Այդ իսկ պատճառով հաճախ անցյալի մասին մարդկանց պատկերացումները իրենց իսկ անձնական փորձի մաս չեն, դրանք «օտար» են: Եվ միայն բարդ աշխատանքի, երկխոսության, զրույցի և խորքային հարցազրույցի միջոցով է հնարավոր ճանաչել բոլորովին այլ, յուրահատուկ փորձառություն, որը նման չէ անցյալի ներկայացման տարածված կարծրատիպերին:

Այսպիսով, հիշողությունը, մասնավորապես անհատական հիշողությունը, հաճախ փոխարինվում է պատմական «պատմամով», քաղաքական դիսկուրսով և մեդիայի կարծրատիպերով: Արդյունքում կրկնակի դժվար է դառնում աշխատանքը այնպիսի բարդ երևույթի հետ, ինչպիսին քվիր հիշողությունն է, քանի որ քվիր մարդիկ ի սկզբանե մարգինալացված են, դուրս են մղված հետերոնորմատիվ հասարակությունից, և մեծ պատմական նարատիվների ճնշման ազդեցությամբ

memory in Armenia, that is, the memory that for many decades has been pushed out from other types of memory and, unfortunately, remains in a space that is bracketed out of the big narratives of the heteronormative and patriarchal society.

We also have to state, regrettably, that memory studies, which have become popular in recent decades, have gradually built a kind of hierarchy showing the trajectory of research interest. In the space of memory studies, the centre and peripheries have already lined up over the years. Such major narratives as Genocide, Refugees, Diaspora, etc. were at the centre of such studies in Armenia. Queer memory and similar phenomena were often ignored by researchers as a separate area of the social past never being subjected to special analysis. The academic environment generally is rather reluctant to let queer memory into its area of interest. Even if the memory of certain minority groups is studied, it is limited to religious or ethnic groups. That is why our attempt to work with queer memory is a kind of **detritorialization** in an institutional and methodological sense. Through this small study, we are trying to break the hegemony of research topics, to bring forth the idea of the necessity to talk about queer people, not only in the context of current social transformations but also within the discourse on the past of Armenia and Armenian society.

It is worth mentioning that the phenomenon of queer memory is already quite well studied in Western research and art culture and remains one of the main troubling topics for social and cultural anthropologists, philosophers and literary critics, psychoanalysts and artists. Talking about chronology, one of the earliest references to such a phenomenon as queer memory appears at the very end of the last century, and here we already can see two inseparable narratives – **“queerness” and “trauma”** [2]. Although to be fair, the phenomenon of queer in the context of the past, or rather the reinterpretation of our past in the context of queer culture, had been the focus of researchers and thinkers long before the word “queer” itself became popular.

One example is Michel Foucault’s appeal to Herculine Barben’s autobiography in the late 1970s [3]. In his **History of Sexuality** and in a separate edition, Foucault depicts the experience of a hermaphrodite by drawing on autobiographical writing and juxtaposing that writing in the first person with the description of “otherness” that emerged and is rooted in culture since the 19th century. The post-structuralist experience highlights the importance of working specifically with autobiographical and autonarrative writing in the study of queer identity. This becomes an important benchmark for our research project as well, within which we work with individual biographies and memories trying to distinguish between collective ideas of queer,

դուրս է մղվում նաև նրանց հիշողությունը: Այս հետազոտական նախագծի հիմնական նպատակը Հայաստանում քվիր հիշողությունը հասկանալու փորձն է, այն հիշողությունը, որը տասնամյակներ շարունակ դուրս է մղվել հիշողության այլ տիպերից, և, ցավոք, շարունակում է մնալ հետերոնորմատիվ և հայրիշխանական հանրության մեծ նարատիվների փակագծերից դուրս գտնվող տարածությունում:

Պետք է նաև արձանագրել, որ վերջին տասնամյակներում մեծ տարածում ստացած հիշողության ուսումնասիրությունները, ցավոք, սկսել են կառուցել ինքնատիպ հիերարխիա՝ հետազոտական հետաքրքրության շրջանակը տարանջատելով կարևորի և նվազ կարևորի: Հիշողության ուսումնասիրության այս տարածությունում տարիների ընթացքում արդեն տարանջատվել են յուրահատուկ կենտրոններ և եզրեր: Ցեղասպանությունը, Փախստականությունը, Սփյուռքը և նմանօրինակ այլ թեմաները մնում են Հայաստանում հիշողության ուսումնասիրությունների կենտրոնում, իսկ այնպիսի երևույթներ, ինչպիսին է քվիր հիշողությունը, որպես սոցիալական անցյալի տարածություն, հաճախ անտեսվում են հետազոտողների կողմից և երբեք հատուկ վերլուծության չեն ենթարկվում: Ակադեմիական միջավայրը ընդհանուր առմամբ մեծ դժվարությամբ և դժկամությամբ է թույլ տալիս քվիր հիշողությանը ներթափանցել իր հետաքրքրության տիրույթ: Եթե նույնիսկ իրականացվում է փոքրամասնությունների հիշողության ուսումնասիրություն, ապա դա սահմանափակվում է միայն կրոնական կամ էթնիկ խմբերով: Այդ իսկ պատճառով ինստիտուցիոնալ և մեթոդաբանական առումով քվիր հիշողության հետ աշխատելու մեր փորձը յուրատեսակ **մետանարատիվների ապատարածականացում** է: Այս փոքրիկ ուսումնասիրության օգնությամբ մենք փորձեցինք կոտրել տարածված և կրկնվող հետազոտական թեմաների գերիշխանությունը, ներդնելով քվիր մարդկանց մասին խոսելու անհրաժեշտությունը ոչ միայն ներկայիս սոցիալական փոխակերպումների համատեքստում, այլ նաև Հայաստանի և հայ հասարակության անցյալի մասին դիսկուրսի շրջանակներում:

Անհրաժեշտ է նշել, որ արևմտյան հետազոտություններում, արվեստում և մշակույթում քվիր հիշողության ֆենոմենը բավականին զարգացած է, սոցիալական և մշակութային մարդաբանների, փիլիսոփաների, գրականագետների, հոգեվերլուծաբանների և արվեստագետների համար այն շարունակում է մնալ հիմնական արդիական թեմաներից մեկը: Փորձելով գտնել քվիր հիշողության ուսումնասիրությունների ակունքները՝ կարելի է նշել, որ առաջին անդրադարձերից մեկը ի հայտ է գալիս անցյալ դարի վերջին, և արդեն իսկ այստեղ անբաժանելի են դառնում հետևյալ երկու նարատիվները՝ **«քվիրը»** և **«տրավման»** [2]:

Քվիր ֆենոմենը անցյալի համատեքստում կամ, ավելի ճիշտ՝ մեր անցյալի էջերի վերաիմաստավորումը քվիր մշակույթի համատեքստում հետազոտողների և մտածողների ուշադրության կենտրոնում է եղել այդ բառի հանրաճանաչ դառնալուց շատ առաջ: Այդպիսի օրինակներից է 1970-ականների վերջին Միշել Ֆուկոյի անդրադարձը Հերկուլին Բարբենի ինքնակենսագրությանը [3]: Ֆուկոն իր **«Սեռականության պատմության»**, ինչպես նաև մեկ այլ առանձին հրատարակության մեջ նկարագրում է հերմաֆրոդիտի փորձը՝ հիմք ընդունելով

covered with a thick layer of media language, and the memory of individual queer people, which has developed during their individual and collective life.

Queer memory studies are becoming part of American academic thought for the first time, introducing a new method and a new research theme that complements the studies of ethnic minorities prevailing at the time. By the 2010s, queer memory had already become a common concept in science, not only for Americans but also for various academies. And finally, today we see how the definition of queer memory begins to work as a methodology for studying a wide variety of local identities. Researchers of queer identity are still quite sensitive and attentive in general to the transformations of the concept of memory in science, offering more and more new aspects of the phenomenon: queer post-memory, queer urban memory, queer memory and war, etc [4]. Another important feature of queer memory studies is the pursuit of **intersectionality**, the consideration of intersecting lines of identity and the past [5].

Our research project on queer memory in Armenia is the first attempt to analyze such a multi-layered and complex phenomenon. In this publication, we have based our analysis of queer memory on interviews with respondents under the age of 40.

We were interested in the generation whose memory of their own queerness was formed in independent Armenia. However, this research experience was not only the first of its kind in the region, but it also showed that our project is pilot, as, in each new story of representatives of the Armenian queer community, we detected **forms of post-memory** that led the narrative into the Soviet past. It is obviously necessary to continue working on the topic and subject the Soviet Armenian queer memory to an in-depth analysis. Armenian literature and queer memory, linguistic transformations and queer memory, etc., undoubtedly deserve particular research attention as well.

ինքնակենսագրական գիրը և առաջին դեմքով այդ գրությունը համադրելով «այլության» այն լեզվին, որը մշակույթում առաջացել և արմատավորվել է XIX դարից ի վեր: Արդեն պոստստրուկտուրալիստների փորձը մատնանշում է քվիր ինքնության ուսումնասիրության մեջ ինքնակենսագրական և ինքնապատումային գրի հետ աշխատելու կարևորությունը: Սա կարևոր ուղենիշ է դառնում մեր հետազոտական նախագծի համար, որի շրջանակներում մենք աշխատում ենք անհատական կենսագրությունների և հիշողությունների հետ՝ փորձելով տարանջատել քվիր հասկացության մասին մեդիայի լեզվով պատված հանրային ընկալումները և քվիր մարդկանց անհատական/հավաքական կյանքի արդյունքում ձևավորված անձնական հիշողությունները:

Քվիր հիշողության ուսումնասիրություններն առաջին անգամ դառնում են ամերիկյան ակադեմիական մտքի մաս՝ ներմուծելով նոր մեթոդ և հետազոտական նոր թեմա, որը լրացնում է էթնիկ փոքրամասնություններին անդրադարձող առավել տարածված հետազոտությունները: Արդեն 2010-ականներին գիտության մեջ քվիր հիշողությունը դարձել էր բավականին տարածված հասկացություն, ոչ միայն ամերիկյան, այլ նաև տարատեսակ ակադեմիաների համար: Եվ վերջապես, այսօր մենք տեսնում ենք, թե ինչպես է քվիր հիշողության սահմանումը սկսում գործել որպես լոկալ ինքնությունների ուսումնասիրության մեթոդաբանություն: Քվիր ինքնության հետազոտողները շարունակում են բավականին զգայուն և ուշադիր լինել, ընդհանուր առմամբ, գիտության մեջ հիշողության հայեցակարգի վերափոխման նկատմամբ՝ առաջարկելով երևույթի ավելի ու ավելի նոր հայեցակետեր՝ քվիր հետհիշողություն, քվիր քաղաքային հիշողություն, քվիր հիշողություն ու պատերազմ և այլն [4]: Քվիր հիշողության հետազոտության մեկ այլ կարևոր հատկանիշ է ձգտումը դեպի **ինտերսեկցիոնալությունը**՝ ինքնության և անցյալի փոխհատումների դիտարկումը [5]:

Հայաստանում քվիր հիշողության վերաբերյալ մեր հետազոտական նախագիծը նման բազմաշերտ և բարդ երևույթի վերլուծության առաջին փորձն է: Այս հրատարակության մեջ մենք սահմանափակվել ենք քվիր հիշողության վերլուծությամբ՝ հիմք ընդունելով մինչև 40 տարեկան մասնակիցների հետ անցկացված հարցազրույցները: Մեզ հետաքրքրում էր այն սերունդը, որի սեփական քվիրության մասին հիշողությունը ձևավորվել է հետխորհրդային Հայաստանում: Մենք քաջ գիտակցում ենք, որ սա առաջին նմանօրինակ հետազոտությունն է ոչ միայն մեր երկրում, այլ նաև մեր տարածաշրջանում, և թեև թեմայի շուրջ մատնանշել ենք բազմաթիվ խնդիրներ, սակայն ոչ բոլորն ենք կարողացել ներառել սույն հետազոտությունում: Յուրաքանչյուր հարցազրույցում, հայկական քվիր համայնքի ներկայացուցիչների յուրաքանչյուր պատմությունում մենք արձանագրում ենք **հետհիշողության ձևեր**, որոնք խոսքը տանում են դեպի խորհրդային անցյալ: Մեզ համար ակնհայտ է, որ անհրաժեշտ է շարունակել աշխատանքը այս թեմայի շուրջ՝ խոր վերլուծության ենթարկելով խորհրդահայ քվիր հիշողությունը, ինչպես նաև հատուկ հետազոտական ուշադրության են արժանի այնպիսի թեմաները, ինչպիսիք են հայ գրականությունն ու քվիր հիշողությունը, լեզվական վերափոխումները ու քվիր հիշողությունը և այլն:

The definition of the concept of queer can be found in a small number of sources. Literary and scientific works note that this word is often defined by the government rather than the people identifying as queers. According to the dictionary definition [6], queer means strange, peculiar, eccentric, not quite right, inappropriate, suspicious. It also indicated social background: people that face economic and/or health difficulties. Later, the word took on a negative connotation describing those with a non-normative sexual/gender identity, i.e. non-heteronormative people who belong to the LGBTIQ+ community.

Defining
the defined
and the indefinite

Քվիր հասկացությունը սակավաթիվ աղբյուրներում է սահմանված: Գրական և գիտական աշխատանքներում նշվում է, որ այս բառը հաճախ սահմանվել է իշխանության, բայց ոչ քվիր ինքնություն ունեցող անձանց կողմից: Բառարանային բացատրության [6] համաձայն՝ քվիր նշանակում է տարօրինակ, յուրօրինակ, էքսցենտրիկ, ոչ այնքան ճիշտ, անհարիր, կասկածելի: Բացի այդ, այն մատնանշել է սոցիալական պատկանելություն՝ տնտեսական և/կամ առողջական դժվարություններ ունեցող մարդկանց: Ավելի ուշ բառը ստացել է բացասական երանգ, բնութագրել սեռական/գենդերային ոչ նորմատիվ ինքնություն ունեցողներին, այսինքն՝ ոչ հետերոնորմատիվ մարդկանց, որոնք պատկանում են LQAFSԻՔ+ համայնքին:

Սահմանելով
սահմանվածն ու
անսահմանելին

In the 19th century, the groups dominating society and representing various forms of power turned language – word selection and the shades of meaning – into a tool for dictating moral dogmas, compelling and pointing out the “impossibility and inconsistency” of groups already oppressed by society. Here we can also mention the Foucauldian philosophy, according to which the 19th century created the new architecture of normalization [7] of women and men, where the record often dominates the real body with its desires and complaints. And only in the second half of the 20th century, when the scientific mind was raising the demand for subjectification more and more often, as a result of the LGBTIQ+ movements that went along with it, people of queer identity became the ones who define and give meaning to that word rather than just silently bear it.

The LGBTIQ+ acronym which gradually expands and incorporates new layers, now presents “queer” as an **orbit of conquered freedom**, where each and every person with such an identity can decide for himself how and why to define the queer, and whether to define it at all.

“Queer is me and those who consider themselves queer and want to live,” said one of our interviewees identifying as queer, who like most of the research participants, came to their queer identity gradually, having previously identified primarily by sex and gender, rather than the ideological context summarizing the philosophy of existence.

The word “queer” is colourful and diverse, and each of our interviewees defined this phenomenon in their own way during the in-depth interviews. Some depicted it outside of sexuality, while others emphasized the role and significance of the latter. However, all the definitions had one thing in common: freedom and rebellion as the fundamental principle and values of queer identity. The queer rejects not only heteronormativity but also patriarchal morals and norms, certain manifestations of political power, social systems and institutions; it calls into **question everything and everyone**. It is personal and impersonal-political at the same time, defining but liberating, it’s about everything and nothing.

“Queer was a very personal thing for me right from the beginning, but later I made it political. For me, it is the closest ideology that ever existed, which helped me to understand the system, norms and traditions, etc. From the moment I began questioning, and analyzing everything I see, I started to feel better in the expression of my identities, feel like a fish in the water. This is the ideology I believe in: if Christians are Christians, I am a Queertian. I see queer as a complex of questioning, making something strange, and problematic, thereby trying to make it better. For me, queer is more of an activity, a political one. If you don’t act as a queer, if your every action doesn’t pursue “queer goals”, if

Հասարակության մեջ գերիշխող և տարատեսակ ուժային դրսևորումներ բանեցնող խմբերը դեռևս XIX դարում լեզուն՝ բառի ընտրությունն ու կիրառման երանգը, վերածել են բարոյական դոգմաներ թելադրելու, հարկադրանքի ու հանրության կողմից արդեն իսկ ճնշված խմբերի «անհնարինությունն ու անհամապատասխանությունը» մատնանշելու միջոցի: Այստեղ կարելի է հիշատակել նաև ֆուկոյական փիլիսոփայությունը, որի համաձայն [7] հենց XIX դարն է ստեղծել կանանց և տղամարդկանց նորմալիզացիայի նոր ճարտարապետությունը, որտեղ հաճախ արձանագիրը գերակայում է իսկական մարմնին՝ իր տենչանքներով և տրտունջներով: Եվ միայն XX դարի երկրորդ կեսին, երբ գիտական միտքը ավելի ու ավելի հաճախ էր բարձրացնում սուբյեկտայնացման պահանջը, դրան զուգահեռ ընթացող ԼԳՏԻՔ+ շարժումների արդյունքում, քվիր ինքնություն ունեցող մարդիկ այս բառը լռելյայն կողմերից վերածվեցին այն սահմանողների ու իմաստավորողների:

ԼԳՏԻՔ+ հապավումը, որն աստիճանաբար ընդլայնվում և նորանոր շերտեր է ներառում, այժմ քվիրը մատուցում է իբրև **նվաճված ազատության ուղեծիր**, որում նման ինքնություն ունեցող յուրաքանչյուր անձ ինքը կարող է որոշել՝ ինչպե՞ս և ինչո՞ւ սահմանել քվիրը, և, առհասարակ, սահմանե՞լ այն արդյոք:

«Քվիրը ես եմ ու էն մարդիկ, ովքեր իրենց համարում են քվիր և ուզում են ապրել», – հարցազրույցներից մեկի ժամանակ նշեց քվիր նույնականացող մեր զրուցակիցը, որը ինչպես հետազոտության մասնակիցների հիմնական մասը, աստիճանաբար է հասել իր քվիր ինքնությանը՝ նախկինում նույնականանալով առավելապես սեռական և գենդերային, այլ ոչ գոյության փիլիսոփայությունն ամփոփող գաղափարական ենթատեքստ կրող էությամբ:

«Քվիր» բառը երփներանգ է ու այլևայլ, և մեր զրուցակիցներից յուրաքանչյուրը խորքային հարցազրույցների ժամանակ յուրովի սահմանեց այս երևույթը: Ոմանք այն պատկերում էին սեռականությունից դուրս, մյուսները՝ այնուամենայնիվ կարևորում վերջինիս դերն ու նշանակությունը: Մի բան ընդհանուր էր՝ ազատությունն ու ըմբոստությունը՝ որպես քվիր ինքնության հիմնարար սկզբունք և արժեք: Քվիրը մերժում է ոչ միայն հետերոնորմատիվությունը, այլև պատրիարխալ բարքերն ու կարգերը, քաղաքական իշխանության որոշակի դրսևորումները, հասարակական համակարգերն ու ինստիտուտները, **հարցադրում և խնդրականացնում ամեն ինչ** և բոլորին: Այն անձնական ու միևնույն ժամանակ անանձնական, քաղաքական է, սահմանող, բայց ազատագրող, ամեն ինչի ու ոչնչի մասին:

«Իմ համար քվիրն ի սկզբանե շատ անձնական ա եղել, հետո արդեն քաղաքականացրել եմ: Ինձ համար երբևիցե գոյություն ունեցող ամենահարազատ իդեոլոգիան ա, որն ինձ օգնել ա հասկանալ համակարգը, վարք ու բարքը և այլն: Էն պահից, որ ես սկսեցի հարցականացնել, տարօրինակել այն ամենը, ինչ կա, սկսեցի ինձ ավելի լավ զգալ իմ ինքնությունների դրսևորման մեջ, ոնց որ ինձ ձուկը քրում զգացի: Էն իդեոլոգիան ա, որին ես հավատում եմ. եթե քրիստոնյաները քրիստոնյա են, ես քվիրոնիա եմ: Ինձ համար քվիրը խնդրականացնելու,

you don't try to question everything within the system, if you work in accordance with the system stages, that's not a complete queer for me.”

It was noticeable that the participants of the interviews within the “Queer Memory in Armenia” project not only had ascribed themselves to another identity before the queer one but also had called into question and rejected the word queer itself at least for some time. In certain cases, the denial was initially caused by the lack of information, sometimes the dominance of gender identity, sometimes the traumatic experience or lack of queer movements in Armenia, the past, collective memory and experience, and cultural localization, which, according to some of our interviewees, is not typical for the Armenian context and does not fully cover local characteristics and nuances.

“What concerns me is that this word comes from another culture and therefore brings things that are alien to me. I used to like that word because it was an umbrella term that could be used in a broad sense. Then I realized that its foreign origin is what bothers me. I sometimes even perceived it as appropriating someone else's experience, because I have not been called queer in America in a certain year so I would feel bad about it and use it in different senses. In short, I was very uncomfortable with that word and its usage. Then I thought and realized that the general idea for me is about the fact that I've always been a rebel. It is very important for me to notice that rebellion and to perceive something that can fit into the idea of queerness. For me, queerness is about questioning the normative things imposed on me, being rebellious, asking why something is so, and not otherwise?”

The above quote shows how the queer, being unconscious and undefined, leads to questions and later – to reflections. Regardless of whether it is conscious or unconscious, it is a key element of memory, a cycle of introspective questions and answers, where individual and collective experiences, local and international culture, politics, and other various threads are interwoven.

“It seems to me that at the moment it is very difficult to define the queer culture in Armenia, because those realities and processes that happened in other places a long time ago, are happening in Armenia now and are happening in the Armenian context. For instance, there is no Karabakh conflict in America. Even the queer culture and movement in Armenia cannot be separated from it. Everything revolves around very in-Armenian problems, so the context is very Armenian.”

տարօրինակելու, հարցականացնելու համալիր և՛ փորձելու ինչ-որ բան ավելի լավը դարձնել: Ինձ համար քվիրն ավելի շատ գործունեությունն է, քաղաքական և. եթե դու չես գործելու որպես քվիր, եթե քո ամեն գործողությունը «քվիր նպատակներ» չի հետապնդելու, եթե դու չես փորձելու հարցականացնել ամեն ինչ համակարգի ներսում, եթե համակարգի փուլերով ես աշխատելու, էդ ինձ համար ամբողջական քվիր չի»:

«Քվիր հիշողությունը Հայաստանում» նախագծի շրջանակներում հարցազրույցների մասնակիցների մեջ նկատելի էր ոչ միայն քվիր ինքնությունից առաջ այլ էություն վերագրելը, այլև առնվազն ինչ-որ ժամանակ խնդրականացնելն ու մերժելը «քվիր» բառն ինքնին: Ոմանց ժխտողականությունը սկզբնական շրջանում պայմանավորված է եղել տեղեկության պակասով, երբեմն՝ գեղեցիկ ինքնության գերակայության, երբեմն էլ՝ Հայաստանում քվիր շարժման, անցյալի, հավաքական հիշողության ու փորձառության տրավմատիկ փորձով կամ բացակայությամբ, մշակութային տեղայնացմամբ, որն ըստ մեր որոշ զրուցակիցների, բնորոշ չէ հայաստանյան համատեքստին և լիովին չի ընդգրկում տեղի առանձնահատկություններն ու նրբությունները:


«Ինձ անհանգստացնում է, որ էս բառն ուրիշ մշակույթից է գալիս և, հետևաբար, իր հետ բերում է բաներ, որ իմ համար խորթ են: Մի պահ կար, երբ ինձ դուր էր գալիս էդ բառը, որովհետև ինքը տենց հովանոցային եզր ունի, հնարավոր և իրեն օգտագործել լայն իմաստով: Տեսո ես հասկացա, որ իր էդ ուրիշ տեղից լինելն ինձ խանգարում աս: Մեկ-մեկ ես դա նույնիսկ ընկալում էի որպես **ուրիշի փորձառության յուրացում**, որովհետև ինձ քվիր չեն ասել Ամերիկայում էդինչ թվերին, որ մի հատ էլ ես դրանից ինձ վատ զգամ, իրան օգտագործեմ ինչ-որ իմաստներով: Մի խոսքով՝ էդ բառի ու իրա օգտագործման հետ վերջերս անհարմար էի շատ: Տեսո ես մտածեցի ու հասկացա, որ ընդհանուր գաղափարն իմ համար նրա մասին և, որ ես միշտ ըմբոստ եմ հիշում ինձ: Ինձ համար շատ կարևոր և նկատել էր ըմբոստությունը և ընկալել մի բան, որը կարա տեղավորվի էդ քվիրության գաղափարի մեջ: Քվիրությունն ինձ համար ինձ հրամցված նորմատիվ բաները հարցականի տակ դնելու, ըմբոստ լինելու մասին և, հարց տալու՝ **խի՛ և էս սենց**»:

Վերը նշված մեջբերումը ցույց է տալիս, թե ինչպես է քվիրը չգիտակցված ու չսահմանված վիճակում հարցադրումների, իսկ հետագայում՝ անդրադարձների հանգեցնում: Անկախ գիտակցված կամ չգիտակցված լինելու հանգամանքից, այն հիշողության առանցքային մասնիկ է, ներահայաց հարցերի ու պատասխանների շրջապատույթ, որում միահյուսված են անհատական և խմբային փորձառությունները, տեղական և միջազգային մշակույթը, քաղաքականությունը և այլ զանազան տարրեր:

Throughout the research work, we repeatedly met people whose queer identity was hybridized and intersected with other identities. Oral histories collected during the in-depth interviews showed in many cases that as a borrowed word and phenomenon in the Armenian language and culture, “queer” has gone and is still going through a specific localization in this reality.

A fairly pronounced identity seems to filter and form a new perception of the queer concept among our interviewees. Thus, queer memory begins to intertwine with local memory and creates a unique human experience that requires articulation and deep analysis.

As a phenomenon that is continuously defined everywhere, queer reaches its absolute freedom at the point where one can not only keep from defining it, but also carry that identity without fully understanding its meaning and/or having such a desire and aspirations. For example, while describing their feelings one of our interviewees quoted a character from a show about San Francisco, who says that after living there for 30 years, he never understood what queer is, yet he continues to identify as queer. Queer – both the word and the phenomenon – allows you to define or not to define it the way you wish, and to perceive your ignorance as a reason for new questions and discoveries, rather than for shame, stigma, or striving for equalization. **Queer is about the freedom to make it sensible and to make it senseless.**



«Ինձ թվում Ե՛ Կայաստանում քվիր մշակույթը սահմանելը շատ դժվար Ե՛ էս պահին, քանի որ Ե՛ն իրողությունները, պրոցեսները, որ ինչ-որ տեղերում կատարվել Ե՛ն շատ ավելի վաղուց, Կայաստանում կատարվում Ե՛ն հիմա ու կատարվում Ե՛ն շատ Կայաստանի կոնտեքստում: Ասենք՝ Ամերիկայում չկա Դարաբաղի խնդիր: Կայաստանում նույնիսկ քվիր մշակույթն ու շարժումը չեն կարա դրանից պոկվի: Ամեն ինչ պտտվում Ե՛ շատ ներհայաստանյան խնդիրների շուրջ, դրա համար կոնտեքստը շատ հայաստանյան Ե՛»:

Հետագոտական աշխատանքի որչ ընթացքում բազմիցս հանդիպեցինք մարդկանց, որոնց քվիր ինքնությունը հիբրիդացված էր և ինտերսեկցիոնալ՝ այլ իսկությունների հետ խաչվող: Խորքային հարցազրույցների արդյունքում հավաքված բանավոր պատմությունները շատ դեպքերում ցույց տվեցին, որ քվիրը, լինելով հայերենի և հայաստանյան/հայկական մշակույթի մեջ դրսից փոխառված բառ և երևույթ, այս իրականության մեջ առանձնահատուկ տեղայնացման միջոց է անցել և մինչև օրս անցնում:

Բավական վառ արտահայտված ինքնությունն ասես ֆիլտրում և քվիր հասկացության նոր ընկալում է ձևավորում մեր կողմից հարցված անձանց շրջանում:

Այսպիսով քվիր հիշողությունը սկսում է միահյուսվել տեղական հիշողության հետ և ստեղծում յուրօրինակ մարդկային փորձառություն, որը հողավորման և խորքային վերլուծության կարիք ունի:

Քվիրն իբրև անընդմեջ, անընդհատ և ամենուր սահմանվող երևույթ իր բացարձակ ազատությանն է հասնում այն կետում, որտեղ կարելի է ոչ միայն չսահմանել, այլև կրել այդ ինքնությունը՝ առանց մինչև վերջ հասկանալու դրա իմաստը և/կամ ունենալու նման ցանկություն և նկրտումներ: Այսպես, օրինակ՝ մեր զրուցակիցներից մեկը, իր զգացողությունները նկարագրելու նպատակով, մեջբերեց Սան Ֆրանցիսկոյի մասին պատմող սերիալներից մեկի հերոսին, որն ասում է, թե 30 տարի այնտեղ ապրելով այդպես էլ չի հասկացել, թե ի՛նչ է քվիրը, և դրանով հանդերձ շարունակում է քվիր նույնականանալ: Քվիրը, ինչպես բառ, այնպես էլ երևույթ թույլ է տալիս ուզածիդ պես սահմանել կամ չսահմանել այն և չիմացությունն ընկալել որպես նոր հարցադրումների ու բացահայտումների, այլ ոչ անոթի, խարանի կամ համահարթեցմանը ձգտելու պատճառ: **Քվիրը իմաստավորելու և իմաստազրկելու ազատության մասին է:**

At a certain stage of our research, it was interesting to note that the initial ideas and memories around the concept of queer in Armenia are often formed through words and phrases heard from other people. Those words usually refer to persons or topics that are not present in the conversation and cannot react in any way.

Words instead
of conversations

Հետազոտության որոշակի փուլում
հետաքրքրական էր այն իրողությունը,
որ Հայաստանում քվիր հասկացության
շուրջ նախնական պատկերացումներն ու
հիշողությունները հաճախ ձևավորվում
են այլ մարդկանցից լսած բառերի և
ձևակերպումների միջոցով:


Բառեր՝ գրույցների
փոխարեն

On the other hand, the lack of talk about sexuality and gender identity, especially within families, is obvious. In other words, the discourse is about non-normative people, but it is heard among people who are still in the process of discovering their sexuality and gender identity. It is also necessary to mention that the initiation of conversations on these topics is self-censored, subjected to passive aggression or rejected by the interlocutors. For example, we are used to the legends about Komaygi and the people who gather there, the labelling of the голубой (blue) and розовый (pink) colours, which are never translated from Russian to Armenian in such situations, the principles expressing the standards of “right and wrong” defined by society for each gender, or words that originally had completely different meanings, like the word “ղգիկ”. These kinds of expressions have the purpose of dictating moral norms, forming a negative attitude, forcing on “**indisputable truths**”, preventing the possible desire to be different and the manifestations of the latter. Family members, friends, and relatives start to use them when the person is still a child or a teenager. Thus, people who themselves are often not enough aware and/or have discriminatory and extremist attitudes towards gender identities, impose their opinion on a phenomenon about which they have prejudices, but no knowledge, personal involvement and/or experience. In the ruling majority of Armenian families, in-depth conversations or any kind of discussions of similar topics are not a usual thing, therefore in our reality the memories and ideas about sexuality and gender identity, at least formed in childhood and early adolescence, are often not based on the essence of the phenomenon itself or deep conversations about it, but rather on the unreasonable public opinions and assessments, rambling words and phrases.

“When I was a kid, I remember that they [LGBT people] were talked about as if they were **people from another planet**: how do they live, what families do they come from, is it possible to do something about it or not, how come someone is gay? I asked my grandma when I was 7 or 8, “Do the gomiks [gays] know that they are gomik?”, to which she got angry and said, “That’s none of your business, don’t you dare ask such a thing.” That question occurred to me because... I don’t remember what conversation I had heard, but I had the impression that it is a phenomenon that develops in some people, which other people around me do not like. And I thought, maybe those people didn’t know they were like that, that’s why they didn’t do anything about it. I remember that conversation very well.”

Այդ բառերը սովորաբար վերաբերում են անձանց կամ թեմաների, որոնք ներկա չեն խոսակցությանը և չեն կարող որևէ կերպ արձագանքել: Մյուս կողմից՝ ակնհայտ է սեռականության և գենդերային ինքնության շուրջ գրույցների բացակայությունը՝ հատկապես ընտանեկան շրջանակներում: Այսինքն՝ խոսույթն ընթանում է ոչ նորմատիվ անձանց վերաբերյալ, բայց հնչում է այն մարդկանց մոտ, որոնք դեռևս իրենց սեռականությունն ու գենդերային ինքնությունը բացահայտելու փուլում են: Անհրաժեշտ է նշել նաև, որ այս թեմաներով գրույցների նախաձեռնումը ինքնագրաքննվում, պասիվ ազդեսիայի է ենթարկվում կամ մերժվում է գրուցակիցների կողմից: Այսպես, օրինակ՝ սովորական են Կոմայգու և այնտեղ հավաքվող մարդկանց մասին լեզենդները, гомыдой և розовый գույների պիտակավորումները, որոնք նման իրավիճակներում երբևէ ռուսերենից չեն թարգմանվում հայերեն, յուրաքանչյուր սեռի համար հասարակության կողմից սահմանված «Ճշտի» և «սխալի» չափանիշներն արտահայտող սկզբունքները, կամ էլ բառերը, որոնք ի բնե բոլորովին այլ իմաստ ունեն, ինչպես «ղզիկ»-ը: Այս տեսակ արտահայտությունները բարոյական նորմեր թելադրելու, բացասական վերաբերմունք ձևավորելու, **«անառարկելի ճշմարտություններ»** հարկադրելու, զանազանվելու հնարավոր ցանկությունն ու դրսևորումները կանխելու նպատակ ունեն: Դրանք ընտանիքի անդամների, բարեկամական և ընկերական շրջանակների կողմից սկսում են երևան գալ այն ժամանակ, երբ անձը դեռևս երեխա կամ պատանի է: Մարդիկ, որոնք հաճախ իրենք էլ բավականաչափ իրազեկ չեն և/կամ խտրական ու ծայրահեղական մոտեցումներ ունեն գենդերային ինքնությունների շուրջ, այսպիսով իրենց կարծիքն են հարկադրում մի երևույթի մասին, ինչի շուրջ ունեն նախապաշարմունքներ, բայց ոչ գիտելիք, անձնական առնչություն և/կամ փորձառություն: Հայաստանյան ընտանիքների իշխող մեծամասնությունում խորքային գրույցները կամ առհասարակ նմանօրինակ թեմաների արժարժումը սովորական բնույթ չեն կրում, ինչի արդյունքում ունենք իրողություն, որում սեռականության և գենդերային ինքնության վերաբերյալ, առնվազն մանկության և վաղ դեռահասության շրջանում, կերպավորված հիշողություններն ու պատկերացումները հաճախ ձևավորվում են ոչ թե ինքնին երևույթի էության կամ դրա շուրջ ծավալված խորքային գրույցների, այլ դրան տրված անհիմն հասարակական որակումների ու գնահատականների, կցկտուր բառերի ու արտահայտությունների հիմքով:

«Երբ ես փոքր էի, հիշում եմ, որ իրանց մասին [ԼԳԲՏ մարդկանց] նենց էին խոսում, ոնց որ խոսային ինչ-որ **նւրիշ մոլորակից եկած մարդկանց մասին**, բա ո՞նց են իրանք ապրում, ինչ ընտանիքներից են իրանք դուրս եկել, ինչ-որ բան հնարավոր ա դրա հետ անել, թե՛ չէ, ո՞նց ա ստացվել, որ ինչ-որ մեկը գեյ ա: 7-8 տարեկանում տատուս հարցրել եմ. «Գոմիկները գիտեն, որ իրանք գոմիկ են», — ու ինքը ջղայնացել, ասել ա. «էդ քո ինչ հարցնելու բանն ա, չհարցնես էլ ըտենց բան»: էդ հարցն իմ մոտ առաջացավ, որովհետև... Ես չեմ հիշում, թե իմ մոտ ինչ էին խոսացել, բայց իմ մոտ տպավորություն էր ստեղծվել, թե դա ինչ-որ մարդկանց մոտ առաջացող երևույթ ա, որը մյուս մարդիկ չեն սիրում իմ շուրջը: Ու ես մտածում էի՝ կարող ա էդ մարդիկ չգիտեն, որ իրանք տենց են,



The study of queer memory shows how queer identity is formed under the influence of aggressive and extremely homophobic discourse towards queer people. The elements of post-memory, i.e. “foreign” yet family memories around the phenomenon, are typical. Often, the older generation “weaves tales” about LGBTIQ+ people based on their own knowledge and shares these tales with the youth. In search of their own identity, queer people have to go through twice as many psychological complexes, and **two-layered traumas**. Influenced by inherited post-memory and the traumas of their own generation, they have to uplift their “self” through the jungles full of misunderstandings of the past, and the rejection of modern society.

Words are followed by visual memories, in which human outlines are preserved, and no direct relation or even contact is necessary to remember them, to get interested and surprised, to be inspired, and

Քվիր հիշողության ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես է քվիր ինքնությունը ձևավորվում քվիր մարդկանց նկատմամբ ագրեսիվ և ծայրահեղ հոմոֆոբ դիսկուրսի ազդեցությամբ: Բնորոշ են հետհիշողության տարրերը, այսինքն՝ Երևույթի շուրջ «օտար», բայց ընտանեկան հիշողությունները: Հաճախ ավագ սերունդը սեփական իմացության հիմքով «հեքիաթներ է հյուսում» ԼԳՏԻԲ+ անձանց մասին և դրանք փոխանցում երիտասարդներին: Սեփական ինքնության փնտրտությունը քվիր անձինք ստիպված են անցնել կրկնակի հոգեբանական բարդությունների, **Երկչերտ տրավմաների** միջով: Ժառանգված հետհիշողության և սեփական սերնդի տրավմաների ազդեցությամբ նրանք ստիպված են իրենց «ես»-ը վերհանել ինչպես անցած ժամանակների թյուրըմբռնումներով լի ջունգլիների, այնպես էլ արդի հասարակության մերժման միջով:

Բառերին հաջորդում են վիզուալ հիշողությունները, որոնցում պահպանվել են մարդկային ուրվագծեր, որոնց հետ անմիջական առնչությունն ու նույնիսկ շփումը ամենևին պարտադիր չեն հիշվելու, հետաքրքրություն ու զարմանք առաջացնելու, ոգեշնչելու, ապահովության զգացում արթնացնելու համար: Քվիր մարդկանց հանդիպելու առաջին դիպվածները մտաբերելու փորձերի ժամանակ հետազոտության մասնակցները վերհիշում էին, օրինակ՝ մոդելի արտաքին ունեցող տղային, ով գունաթափում էր մազերը, փիրսինգ անող Կթրուկ-ին, այլ ենթամշակույթների պատկանող մարդկանց, ինչպիսիք էմոներն են, հարևանի արկածախնդիր տղային, Թումոյում հանդիպած խմբեցիներին, համաքաղաքացուն, որին պարբերաբար հանդիպել և նկատել են, բայց միայն սեփական քվիր ինքնությունը բացահայտելուց հետո են ծանոթացել և այլն:

Անցյալին արդեն ամուր ձևավորված **քվիր ինքնությամբ**, իրազեկվածությամբ և փորձառությամբ անդրադառնալիս, քվիր անձանցից շատերը մտաբերում են մարդկանց, որոնք ոչ միշտ են կապված ոչ հետերոնորմատիվ սեռական ինքնության հետ: Հետազոտության գրեթե բոլոր մասնակիցներ հիշողություններում նման առանցքային կերպարներ էին միայնակ ապրող, չամուսնացած կամ ամուսնալուծված կանայք, որոնց ընտանեկան կարգավիճակը, որ թվում է թե պետք է անձնական, չհանրայնացվող ու չքննարկվող լիներ, հաճախ նրանց տարօրինակելու, պիտակավորելու, քննադատելու, պախարակելու կամ մերժելու պատճառ է դարձել: Առանձին դեպքերում զարմանքին և/կամ ամոթանքին փոխարինել է խղճահարությունը՝ իբրև մտահոգության, հոգատարության դրսևորում, և խիստ հազվադեպ են դեպքերը, երբ այս կանայք հասարակության լայն շրջանակների կողմից ընկալվել են որպես սեփական որոշումները կայացնող ազատ ու անկախ անհատներ, որոնք այսպիսով ո՛չ «սխալ» են, ո՛չ էլ արտասովոր: Անհրաժեշտ է նշել, որ բաժանված տղամարդկանց նկատմամբ նման վերաբերմունքը ներհատուկ չէ:

Հետաքրքրական է, որ չնայած այս կանայք հետազոտության մասնակիցների կյանքում հայտնվել են մանկության և/կամ պատանեկության շրջանում, երբ թվում է, թե դեռևս իշխող են ընտանիքի և հասարակության թելադրած բարոյական նորմերն

to feel secure. When trying to recall their first encounters with queer people, the study participants remembered, for example, a model-looking boy who bleached his hair, ЧЕРТИК who had piercings, people from other subcultures such as emos, the adventurous boy next door, groupmates they came across at Tumo, a fellow countryman, whom they regularly saw and noticed, but got to know only after revealing their own queer identity, and so on.

When reflecting on the past with a firmly formed **queer identity**, awareness and experience, many queer people think of those who are not always associated with a non-heteronormative sexual identity. Almost for all of the study participants, these are lonely, single, or divorced women, whose family status – which should have been private and not publicly discussed – often caused them to be weirded out, labelled, criticized, condemned, or rejected. In some cases, surprise and/or disgrace was replaced by pity as an expression of concern, care, and in exceptional cases, these women were perceived by the wider society as free and independent individuals in charge of their own decisions, who are thus neither “wrong” nor extraordinary. Let us underline that such an attitude towards divorced men is not typical.

What is remarkable is that although these women showed up in the lives of the research participants in their childhood and/or adolescence years, when the moral norms and demands dictated by family and society still seem to be predominant, many of our interviewees admired them as individuals who rebelled against the Armenian heteropatriarchal and normative culture and traditions merely by their existence and daily life.

“At 5-6, obviously, I already had, not to say formed consciousness, but at least fear on the sensory, emotional level, that I should not speak, I would be punished. I could see what was the attitude toward people who were a little different, in every way. For instance, there was a woman in our neighbourhood who had no husband and had never been married but had a child, and everybody said she was a whore. Or when I was a kid and didn’t understand much, didn’t know much, but there was a man who had obvious mental problems, and, of course, his behaviour was different, his ways of communication, his moves, clothes, manners, and they said: “He is nuts”. **He was just different**, his existence didn’t harm anyone, he didn’t depend on anyone, he worked at a garbage collection point, was a labourer, he took care of himself. At that time, I already realized that anyone who is slightly different will be bullied.”

ու պահանջները, մեր գրուցակիցներից շատերը հիացմունքով էին խոսում նրանց մասին՝ որպես անհատների, որոնք պարզապես իրենց գոյությամբ և ամենօրյա կեցությամբ ընդվզում են հայաստանյան հետերոպատրիարխալ և նորմատիվ մշակույթի և բարքերի դեմ:

«5-6 տարեկանում, ակնհայտորեն, արդեն կար, չասեմ՝ ձևավորված գիտակցություն, բայց как минимум զգայական, հուզական մակարդակի վախ, որ պետք չի խոսալ, քեզ կպատժեն: Ես տեսնում էի, թե ոնց էին վերաբերվում մարդկանց, ովքեր մի քիչ ուրիշ էին՝ ամեն տեսակի ուրիշ էին: Ասենք՝ մեր թաղում կար կին, որն ամուսին չուներ ու երբեք ամուսնացած չէր եղել, բայց երեխա ուներ, սաղ ասում էին, որ ինքը բոզ ա: Կամ, ասենք՝ մի հատ մարդ կար, ես էդ ժամանակ փոքր եմ եղել, շատ բան չեմ հասկացել, չեմ իմացել, բայց ինքը ակնհայտորեն հոգեկան-մտավոր լուրջ խնդիրներ ուներ, և իրա պահվածքը, բնականաբար, տարբեր էր, ուրիշ էր մյուսներից՝ կոմունիկացիան, շարժումները, հագուկապը, պահելաձևը, ու սաղ ասում էին՝ գիժ ա դա: **Ինքն ուղղակի ուրիշ էր,** ոչ մեկին վնաս չէր տալիս իր գոյությամբ, կառչած չէր ոչ մեկից, աղբ հավաքելու տոչկայում էր աշխատում, բանվորություն էր անում, իրան պահում էր: Էդ ժամանակ իմ համար արդեն ակնհայտ էր, որ ով մի քիչ ուրիշ ա՝ քննվում ա»:

«Ես հիշում եմ իմ մամայի ընկերուհուն, որ բաժանված էր, քաղաքում մենակ էր ապրում՝ չնայած ինքը գյուղից էր, աշխատում էր, ինքն իր մասին հոգ էր տանում: Իմ շրջապատում չկային տենց կանայք: Այսինքն՝ էնքան ըմբոստ էր, որ չնայած հասարակության պատկերացումներին, որ եթե ամուսնացել ես, պիտի մինչև վերջ էլ կապի մեջ մնաս, բաժանվելու, ինքնուրույն ապրելու որոշում էր կայացրել: Ինքը բավական տպավորվել ա, նույնիսկ եթե էն ժամանակ չեմ նկատել»:

«Եթե հիմիկվա պերսպեկտիվայով նայեմ, ահավոր շատ քվիր մարդ ա եղել իրականում: Ես Սևանից եմ ու երևի 5-6 տարի եմ ապրել ընդհանուր էնտեղ, ու ինձ համար շատ տենց մարդիկ կային: Դրանք, օրինակ՝ էն կանայք էին, որոնք կամ չէին ամուսնացել, կամ բաժանվել էին: Իրանք իմ համար տարօրինակ էին, ու ես միշտ զգում էի, որ էս մարդն ինձ հասկանում ա, ու ես կարամ իրա մոտ բացվեմ»:

Հետագայում, ընտանիքի և/կամ այլ շրջանակների կողմից հնչած կցկտուր բառերը, չլսված գրույցներն ու քողարկված կերպարները դուրս են պրծնում խիստ սահմանափակ միջավայրերից ու հայտնվում զանգվածային մեդիայում ու մշակույթում՝ հաստատելու և/կամ մերժելու կարծրատիպերն ու նախապաշարմունքները, նպաստելու մտքերի, հարցադրումների ու հիշողությունների ձևավորման, որոնք վերաիմաստավորվում են հետահայաց պրիզմայով:

Բանավոր պատմությունը ցույց է տալիս, որ քվիր հիշողությունը ձևավորվում և զարգանում է իբրև հանրային հիշողության մեծ նարատիվների մի սեգմենտ՝

“I remember my mom’s friend who was divorced and lived alone in the city, even though she was from the village, worked, and took care of herself. There were no such women in my surroundings. She was so rebellious that decided to get divorced and live independently, regardless of society’s beliefs that if you get married you should stay in that relationship till the end. I was quite impressed by her, even if I didn’t notice at the time.”

“Looking back from today’s perspective, there were actually a lot of queer people. I am from Sevan, I lived there for 5-6 years in total, and I knew many such people. They were, for example, those women who were either unmarried or divorced. They seemed strange to me, and I always felt that they would understand me, and I could open up to them”.

Later, the clumsy words said by family and/or other surroundings, unheard conversations and hidden characters escape from highly restricted environments and appear in mass media and culture to confirm and/or disprove stereotypes and prejudices, contributing to the formation of thoughts, questions and memories that are reinterpreted through the retrospective prism.

The oral story shows that queer memory is formed and develops as a segment of the larger narratives of public memory, inseparable from other social and cultural discourses. In the Armenian patriarchal socio-cultural environment, taboos and phobias often create borders of otherness and divide society into “the normal” and “the abnormal”.

Memory is formed between the collisions of these polarized and obstructed fields. As we can see, not only people who have already acquired queer identity but also women, who try to gain sexual and/or gender freedom, become targets of the process of norm formation and normalization in general.

անբաժան այլ սոցիալական և մշակութային խոսույթներից: Հայաստանյան պատրիարխալ սոցիալ-մշակութային միջավայրում տաբուները և ֆոբիաները հաճախ ձևավորում են այլության սահմանները և տարանջատում հանրությունը նորմալների և ոչ նորմալների: **Հիշողությունը ձևավորվում է այդ բևեռացված և պատմեշված դաշտերի բախումների միջև:** Ինչպես տեսնում ենք, նորմայի ձևավորման և ամհասարակ նորմալիզացիայի գործընթացի թիրախ են դառնում ոչ միայն մարդիկ, որոնք արդեն ձեռք են բերել քվիր ինքնություն, այլ նաև կանայք, որոնք փորձում են ձեռք բերել սեռական և/կամ գենդերային ազատություններ:

The factors and sources that shape the worldview, represented by people – family, acquaintances, and strangers – eventually are replaced by technologies, that is to say, the traditional and digital media, and the culture they present. The study of these tools reflects not only the representation of queerness in different periods of the past and the surrounding ideas but also such key features as the form and frequency of news coverage, and the superficial or absolutely no reporting of major events.

Digitalization
of queer memory

Ժամանակին զուգահեռ, աշխարհայացք ձևավորող գործոններն ու աղբյուրները մարդկանցից՝ ի դեմս ընտանիքի, ծանոթ ու անծանոթ մարդկանց, վերածվում են տեխնոլոգիաների՝ նկատի առնելով ավանդական և թվային մեդիան և դրանցով մատուցվող մշակույթը: Այս գործիքների ուսումնասիրությունն արտացոլում է ոչ միայն անցյալի տարբեր շրջաններում քվիրության ներկայացումն ու դրա շուրջ ձևավորված պատկերացումները, այլև՝ այնպիսի որոշիչ հատկանիշներ, ինչպիսիք են լրատվության մատուցման ձևն ու հաճախականությունը, առանցքային իրադարձությունների մակերեսային լուսաբանումը կամ դրա իսպառ բացակայությունը:

Քվիր

հիշողության թվայնացում

Queer memory can be conventionally classified into pre-digital (post-memory inherited from the older generation) and digital indicators.

The lack of spaces, and cultural and social institutions supporting queer people literally push them out of reality and force them to move to the digital space considered to be more **protected and safe**.

For all our research participants, culture and media are inseparable, because they learned about diverse genres and works of art, and got acquainted with queer artists through those information tools. It is interesting to note that the earlier memories are mostly related to visual arts and media: movies, soap operas, comic TV shows, etc. The second key art form is music. The factor of accessibility is huge here, since unlike visual media, which for the scarcity and/or lack of resources and means, could only exist on television, the available facilities for listening to music, namely radio and various record players, were more widespread (including in public transport, shops, and other public places). The participants could recall almost no examples from literature and other art forms stuck in their early memories, and it's no wonder because queer and any other topic related to non-normativeness were not presented and discussed in educational institutions, information and artistic flows, media, and mass culture; there were no public figures, who would present that art outside the narrow circles, who would talk about such topics.

We would not be wrong if we say that before the Internet emerged as a unique phenomenon and became accessible to the public, the media and culture reached our interviewees in a fragmented and somewhat random way. The reason was, on the one hand, the lack and/or absence of media tools, the family members' control over them, and on the other hand, the lack, absence and/or disguised way of representation of queer topics in the media and culture. The analysis of the in-depth interviews has proven that often not only the time spent in front of the TV or computer but also the received content was directly or indirectly controlled by the family members. It was the adults or men who decided what to watch on TV, how much time the child should spend and/or what to do on the computer. In this sense, the access to portable devices, mobile phones and the Internet was groundbreaking: they filled the information vacuum making it possible to freely search, find, watch, listen and generally **consume the media and culture** not discussed by narrow circles and mass media. The Internet brought phenomenal freedom to queer people as content consumers and creators, artists, cultural figures, and just people who needed to hear, see, read, and understand their own experiences that until then seemed unique, sensitive, and indefinite.


Պայմանականորեն քվիր հիշողությունը կարելի է դասակարգել նախաթվային (ավագ սերնդի կողմից ժառանգված հետհիշողություն) և թվային ցուցիչներով:

Քվիր անձանց աջակցող տարածքների, մշակութային և սոցիալական ինստիտուտների բացակայությունը բառացիորեն դուրս են մղում նրանց իրականությունից և հարկադրում տեղափոխվել թվային տիրույթ, որը համարվում է առավել **կաշտված և անվտանգ**:

Մեր հետազոտության բոլոր մասնակիցների համար մշակույթը և մեդիան անանջատելի են, քանի որ հենց տեղեկատվական գործիքների միջոցով են իմացել արվեստի ամենատարբեր ժանրերի և գործերի մասին, ծանոթացել քվիր արվեստագետների հետ: Հետաքրքիր է նկատել, որ նրանց վաղ շրջանի հիշողությունները հիմնականում կապված են վիզուալ արվեստի և մեդիայի տեսակներին՝ ֆիլմեր, սերիալներ, հումորային հաղորդումներ և այլն: Երկրորդ որոշիչ արվեստի տեսակը երաժշտությունն է: Այստեղ կարևոր է նկատել հասանելիության գործոնը, քանի որ ի տարբերություն վիզուալ մեդիայի, որը ռեսուրսների և միջոցների սակավության և/կամ բացակայության պատճառով հնարավոր էր դիտել միայն հեռուստացույցով, երաժշտություն լսելու համար մատչելի գործիքները՝ ռադիոն և տարատեսակ նվագարկիչները, առավել տարածված էին (այդ թվում՝ հանրային տրանսպորտում, խանութներում և հասարակական այլ վայրերում): Գրականությունից ու արվեստի մյուս ճյուղերից օրինակներ գրեթե չեն տպավորվել հետազոտության մասնակիցների վաղ հիշողություններում, և սա պատահական չէ, քանի որ քվիրը և առհասարակ ոչ նորմատիվությանը հարող որևէ թեմա չի ներկայացվել և քննարկվել կրթական հաստատություններում, տեղեկատվական և արվեստային հոսքերում, լրատվամիջոցներում, զանգվածային մշակույթում, և չկային հանրային մարդիկ, որոնք մեղ շրջանակներից դուրս կներկայացնեին այդ արվեստը, կխոսեին նմանօրինակ թեմաներով:

Սխալ չի լինի ասել, որ մինչև ինտերնետի՝ իբրև ֆենոմենալ երևույթի ի հայտ գալն ու հանրության լայն շրջանակներին հասանելի դառնալը մեդիան և մշակույթը հատվածական և ինչ-որ առումով պատահականության արդյունքում էին հասնում մեր զրուցակիցներին: Պատճառը մի կողմից մեդիա գործիքների պակասը և/կամ բացակայությունն էր, ընտանիքի անդամների իշխանությունը դրանց նկատմամբ, մյուս կողմից՝ մեդիայում և մշակույթում քվիր թեմաների ներկայացվածության բացակայությունը, պակասը և/կամ խիստ քղարկված լինելը: Խորքային հարցազրույցները վերլուծելու արդյունքում պարզ դարձավ, որ շատ հաճախ, օրինակ՝ հեռուստացույցի կամ համակարգչի առաջ անցկացնելու ոչ միայն ժամանակը, այլև բովանդակությունն էր ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվում ընտանիքի անդամների կողմից: Օրինակ՝ տան մեծահասակները կամ տղամարդիկ էին որոշում, թե ի՛նչ նայել հեռուստացույցով, կամ թե որքա՛ն ժամանակ պետք է երեխան անցկացնի և/կամ ի՛նչ անի համակարգչի առաջ: Այս իմաստով բեկումնային էր դյուրակիր սարքերի, բջջային հեռախոսների և համացանցի հասանելիությունը, որոնց հայտնվելուց հետո միայն տեղեկատվական վակուումը լցվեց և հնարավոր դարձավ ազատորեն փնտրել, գտնել, նայել, լսել և առհասարակ **սպառել մեդիա և մշակույթ**, որի մասին լռում էին







The single cases of controversial coverage of queer topics by the culture and media (in particular, the explosion [8] of the DIY club) had a crucial impact on the lives of queer people, who thus began to notice, even if subconsciously, recognize, **identify the queer**, and then question, accept their identity and be at peace with it.

Self-awareness, in turn, led to new searches and achievements, it opened new horizons for queer people, they discovered like-minded people and supporters, as well as opportunities to find art, culture and information sources.

նեղ շրջանակներն ու զանգվածային լրատվամիջոցները: Ինտերնետը ֆենոմենալ ազատություն բերեց քվիր անձանց՝ իբրև բովանդակություն սպառողների և ստեղծողների, արվեստագետների, մշակույթի գործիչների և պարզապես մարդկանց, որոնք կարիք ունեին լսելու, տեսնելու, կարդալու, հասկանալու իրենց փորձառությունը, որ մինչ այդ թվում էր եզակի, զգայական ու անսահմանելի:

Մշակույթի ու մեդիայի կողմից քվիր թեմաների հատուկեմտ և խնդրահարույց լուսաբանումները (մասնավորապես՝ DIY ակումբի պայթեցումը **[8]**) որոշիչ ազդեցություն են ունեցել քվիր մարդկանց կյանքում, որոնք այսպիսով սկսել են թեկուզ ենթագիտակցորեն նկատել, ճանաչել, **բացահայտել քվիրը**, այնուհետև հարցադրել, ընդունել իրենց ինքնությունը և հաշտ լինել դրա հետ:

Ինքնագիտակցումն իր հերթին հանգեցրել է նոր որոնումների ու ձեռքբերումների, քվիր անձանց համար բացվել են նորանոր եզերքներ, բացահայտվել համախոհներ ու համակիրներ, ինչպես նաև արվեստի, մշակույթի և տեղեկատվական աղբյուրներ գտնելու հնարավորություններ:





In the memories of most participants of the research, television was not only a media tool for information and entertainment but also a way to see different, unusual people for the first time. It [9] was the most accessible media tool for many people living in Armenia in the early 2000s and even in the 2010s. In that period, the role of the Internet and computer technologies might be important, but they were not vital for the broad masses of the public, so television continued to dominate as the main means and source, the only more or less diverse informational alternative to what was heard from and imposed by family, educational and other public institutions. However, the extraordinary and the strange against the universal norm were very limited and insignificant in the coloured box.

Colour TV -
monochrome
broadcast

Հետազոտության մասնակիցների հիմնական մասի հիշողություններում հեռուստացույցը ոչ միայն տեղեկատվության և ժամանցի մեդիա գործիք է, այլև առաջին անգամ տարբերվող կերպարների հետ ծանոթանալու միջոց: Այն [9] վաղ 2000-ականներին և նույնիսկ 2010-ականներին ամենահասանելի մեդիա գործիքն էր Հայաստանում բնակվող շատ մարդկանց համար: Այդ շրջանում ինտերնետի և համակարգչային տեխնոլոգիաների դերը գուցե կարևոր, բայց կենսական չէր հանրության լայն զանգվածների համար, ուստի հեռուստատեսությունը շարունակում էր գերակայել իբրև հիմնական միջոց և աղբյուր, միակ քիչ թե շատ բազմազան տեղեկատվական այլընտրանքն այն ամենին, ինչ հնչում և պարտադրվում էր ընտանիքի, կրթական և հասարակական այլ հաստատությունների կողմից: Գունավոր արկղում սակայն խիստ սահմանափակ և աննշմար էին համընդհանուր նորմատիվությունից դուրս պրծած արտասովորն ու տարօրինակը:

Գունավոր
հեռուստացույց՝
միագույն եթեր



“In fact, I grew up in a poor family, and I got access to a phone and the Internet only at 15. There was nothing on TV, I only remember how Conchita won in 2014.”

There were no open, non-normative characters in the films available in Armenia, the media rarely covered this topic, mostly it was superficial coverage of violence and crimes against transgender people. Queer people were portrayed on TV only from a marginalized, derisive angle, thus reinforcing existing stereotypes, legends, and unjustified conspiracy theories. This stuff left traumatic marks in the memories of queer people in Armenia, who, under their influence, were afraid of their queer identity, of being teased, abused and hated by society.

“I remember a sketch from “Kargin Haghordum” TV show, where someone is walking in Komaygi park, and three different gays trying to pick him up, in the end, he goes to the policeman to complain, and the policeman says: “Why have you come to our park in the first place, huh,



«Իրականում ես շատ աղքատ եմ մեծացել ու հեռախոսի, համացանցի հնարավորություն ունեցել եմ միայն 15 տարեկանում: Հեռուստացույցով ոչ մի բան չկար, մենակ 2014 թվի Կոնչիտայի հաղթանակն եմ հիշում»:

Հայաստանում հասանելի ֆիլմերում **չկային բաց, ոչ նորմատիվ կերպարներ**, լրատվությունը թեմային հազվադեպ էր անդրադառնում՝ հիմնականում տրանսգենդեր անձանց նկատմամբ կատարված բռնությունների և հանցագործությունների մակերեսային լուսաբանմամբ: Քվիր մարդիկ հեռուստատեսությունում ներկայացված էին միայն մարզինալացված, ծաղրական դիտանկյունից, ինչի արդյունքում ամրապնդվում էին գոյություն ունեցող կարծրատիպերը, լեզենդներն ու անհիմն դավադրության տեսությունները: Այս նյութերը տրավմատիկ հետքեր են թողել Հայաստանում ձևավորված քվիր անձանց հիշողություններում, որոնք դրանց ազդեցությամբ սկսել են վախենալ իրենց քվիր ինքնությունից, հասարակության կողմից ծաղրի, բռնության և աստվության արժանանալուց:

«Ես հիշում եմ «Կարգին հաղորդման» ինչ-որ սքեթչ, որը նրա մասին էր, որ ինչ-որ մեկը Կոմայգիով քայլում ա, երեք տարբեր գեյ փորձում ա իրան կպցնի, վերջում գնում ա ոստիկանի մոտ, բողոքում ա, ոստիկանն էլ ասում ա. «Բայց դու ինչի՞ ես եկել մեր այգի, հը, այ՛ զզվելի»: Էն ժամանակ իմ համար էդ սքեթչը խնդալու չէր, վախենալու էր: Իմ համար մանկուց վախենալու են էն սյուժեներով կինոները, որտեղ քեզ հետևում են, ու դու ոչ մի կերպ չես կարողանում դուրս գալ, իսկ էդ սքեթչը հենց էդ ձևով էր

you nasty?” At that time, that sketch was not funny, it would scare me. Since childhood, I was scared of movies where you are being followed and you can’t escape, and this sketch was made in that way. I thought, “Oh God, what can I do to avoid ending up in such a situation?” Now I think that **queer culture was demonized.**”

“We didn’t have drag queens, but we had male actors who took on female characters, for example, Hayko-Mko. I don’t know if it’s worth being proud of. Now that I look at it, I see it that way, although I don’t think they realized what they were doing. As much as out-of-the-norm people were shown, they were shown in a negative light, and others laughed at it, they made a mockery of these people.”

It is acceptable/forgivable for the public to show people who are out of the norm on television only if presented within the comic genre.

“Brazilian and Mexican soap operas were quite popular in Armenia for a very long time, and I remember that at some point gay characters started to appear there; in some series, they were quite positive characters. I even felt some sympathy from my family towards those characters. I am a gay who grew up watching Mexican soap operas. Now that I look back, I see the importance of representation, of how they were represented. There was even a trans person in one of the series. Some series put them in a negative light, but most of them were positive. I guess Mexico is ahead of Armenia in terms of gay rights because they were very poorly represented in Armenia.”

The homogeneity of Armenian mass media and culture was indirectly opposed by foreign TV shows. It is noteworthy that this kind of material came into sight of queer people through their traditionalist and patriarchal family members, who did not even suspect that simply by turning on the TV, they not only provided their entertainment but also acted as a mediator for the presentation and access to a new, incomparably free and colourful culture. Well-dressed characters with beautiful make-up, women who drove cars and “solved problems”, and this type of other characters, were not always easy to understand, but due to cultural differences were still attractive and pleasant, bringing a **new sensory experience**, leading to unexpected questions, which otherwise would have suppressed and limited space to be formed and exist.

“There was a shitty Armenian TV series called “Anna”, I used to watch it with my grandmother, its 6th rerun. There was a character

նկարած: Ես մտածում էի. «Աստված ջան, ո՞նց անեմ, որ էդ իրավիճակում չհայտնվեմ»: Հիմա մտածում եմ, որ **դիվականացնում էին քվիր մշակույթը**»:

«Մենք չենք ունեցել drag queens, բայց ունեցել ենք տղամարդ դերասաններ, որոնք վերցրել են կանացի կերպարներ, օրինակ՝ Հայկո-Մկոն: Չգիտեմ՝ արժի՞ն դրանով հպարտանալ: Հիմա որ նայում եմ, տենց եմ ընկալում, չնայած չեմ կարծում, որ իրենք գիտակցել են, թե ինչ են անում: Ինչքան էլ որ ցույց են տվել նորմայից դուրս գտնվող մարդկանց, բացասական ձևով են ցույց տվել, ու մարդիկ ծիծաղել են դրա վրա, ծիծաղի առարկա են դարձրել մարդկանց»:

Հանրության համար ընդունելի/ներելի է նորմայից դուրս գտնվող մարդկանց ցուցադրումը հեռուստատեսությամբ միայն այն պարագայում, երբ այդ ամենը ներկայացվում է հունորային ժանրի սահմաններում:

«Հայաստանում շատ երկար ժամանակ շատ պոպուլյար էին բրազիլական, մեքսիկական սերիալները, ու ես հիշում եմ, որ ինչ-որ պահից ընդդեմ սկսեցին հայտնվել գեյ կերպարներ, ու ինչ-որ սերիալներում իրանք նույնիսկ բավական դրական կերպարներ էին: Ես նույնիսկ ինչ-որ սիմպատիա էի զգում իմ ընտանիքի կողմից էդ կերպարների նկատմամբ: Ես մեքսիկական սերիալների վրա մեծացած մի գեյ եմ: Հիմա որ հետահայաց նայում եմ, էդ ռեպրեզենտացիայի կարևորությունն ա, թե ո՞նց էին ներկայացնում: Սերիալներից մեկում նույնիսկ տրանս կերպար կար: Կային սերիալներ, որ բացասական էին ներկայացնում, բայց հիմնականում դրական: Երևի Մեքսիկան gay rights-ի առումով առաջ ա Հայաստանից, որովհետև Հայաստանում շատ վատ էր ներկայացվում»:

Հայկական զանգվածային մեդիայի և մշակույթի միօրինակությունն անուղղակիորեն հակադրվում էր արտասահմանյան սերիալներով: Ուշագրավ է, որ այս տեսակ նյութերը քվիր անձանց տեսադաշտում էին հայտնվում ավանդապաշտ և պատրիարխալ ընտանիքի անդամների կողմից, որոնք չէին էլ կասկածում, որ պարզապես հեռուստացույցը միացնելով ոչ միայն իրենց ժամանցն են ապահովում, այլև միջնորդ հանդիսանում նոր, անհամեմատ ազատ և գունեղ մշակույթի ներկայացման, հասանելիության համար: Գեղեցիկ հագնված և շաքարված սերիալի հերոսները, մեքենա վարող և «հարցեր լուծող» կինն ու մյուս կերպարները թեև ոչ միշտ էին հասկանալի, բայց մշակութային տարբերությունների պատճառով, մինևույն է՝ գրավիչ էին, հաճելի, **զգայական նոր փորձառություն** բերող, անսպասելի հարցադրումների հանգեցնող, որոնց ձևավորման ու գոյության տարածքները այլապես խիստ ճնշված և սահմանափակված կլինեին:

«Մի հատ հայկական անասուն սերիալ կար՝ «Աննա» էր անունը, տատիս հետ էի նայում՝ վեցերորդ կրկնությունը: Է՛նտեղ մի հատ կերպար կար, շատ ինչ-որ մասկուլին կին էր, ավտո էր քշում, գալիս հարցեր էր լուծում: Ես

there, a very masculine woman, who drove a car and came to solve issues. I remember looking at her and thinking. “Oh, my God, who is this?” She was so queer for me, but of course, nothing was said about this in the series. There were Brazilian soap operas with interesting characters who were straight. I liked to watch the women there, who were well-groomed, with good make-up.”

“I remember some things from the TV series, but I have no names at all. I remember very well that there were characters that I “knew”. They didn’t say all the words in the Armenian translation, but the word “արվասնլ” was what they gave for “gay”, and I remember it. I could see the attitude of the family or those people with whom I happened to watch the series: they were not positive about that character. Mostly, it was someone ridiculous, a barber or someone’s mate, who was hopelessly in love with some young man. But I have never seen a lesbian. It didn’t happen, I would have noticed.”

In the memories of the people who participated in our research, there are almost no Armenian films and programs related to queer, apart from the comedy shows that made fun of the “strangeness” of people, like “Kargin Haghordum”, “32 Teeth Club”, “Vitamin Club”, “7.5”, “Yere1”, and Russian “Comedy Club”. An exception is a film “Անհայտ բաժանորդ” (“Unknown Caller”, 2019) mentioned by one of the participants, where one of the characters is gay, but this is a remake of the Italian film “Ideal Strangers” released in 2016.

Thus, the queer content of Armenian television was mostly limited to serials, and comic programs, which did not joke about LGBTIQ+ topics, but rather dishonor these people, made them an object of ridicule, **reinforced stereotypes in society**, facilitated discrimination, and verbal and non-verbal violence. Analytical, discussion and other programs, which could oppose this type of superficiality through deep and high-quality content and fill the information gap on queer topics, rejected and completely silenced non-normative themes, thus contributing to the ignorance of larger society and the exclusion of queer people.

հիշում եմ, որ նայում էի ու մտածում. «Oh, my God, էս ո՞վ ա վաբշե»: Ինքն իմ համար շատ քվիր ա, բայց, դե, իհարկե, սերիալում էս մասին ոչ մի բան չէր խոսվում: Բրազիլական սերիալներ կային, որտեղ հետաքրքրի կերպարներ կային, որոնք սթրեյթ էին: Ինձ դուր էր գալիս նայել էնտեղի կանանց, որոնք լավ խնամված, շպարված էին»:

«Ինչ-որ սերիալներից եմ հիշում ինչ-որ բաներ, բայց անուններ բացարձակ չեմ հիշում: Շատ լավ հիշում եմ, որ կային սերիալների կերպարներ, որոնց «ճանաչում» էի: Նայերեն թարգմանության մեջ բառեր չէին նշում, բայց «արվամոլ» բառն ա, որ թարգմանում էին, ու հիշում եմ: Ես տեսնում էի տնեցիքի կամ էն մարդկանց վերաբերմունքը, ում հետ բախտ էր վիճակվում նայել էդ սերիալը, իրենք դրական չէին վերաբերվում էդ կերպարին: Տիմանակնում ծիծաղալու էր էդ կերպարը, վարսավիր էր կամ ինչ-որ մեկի եսիմինչն էր, որն անհույս սիրահարված էր ինչ-որ երիտասարդի: Բայց լեսբիներ չեմ ռաստվել ոչ մի տեղ երբեք: Չի եղել, ես կտենայի»:

Տարբեր լինելը ծաղրի առարկա դարձնող հումորային հաղորդաշարերից՝ «Կարգին հաղորդումից», «32 ատամից», «Վիտամին ակումբից», «7,5»-ից, «Ye-re1»-ից, ռուսական Comedy Club-ից գատ, մեր հետազոտությանը մասնակցած մարդկանց հիշողություններում քվիրին վերաբերող հայկական ֆիլմեր ու հաղորդաշարեր գրեթե չկան: Բացառություն է մասնակիցներից մեկի նշած «Անհայտ բաժանորդ» (2019) ֆիլմը, որտեղ կերպարներից մեկը գեյ է, սակայն սա 2016 թվականին նկարահանված իտալական «Իդեալական անծանոթներ» ֆիլմի ռիմեյքն է:

Այսպիսով՝ հայաստանյան հեռուստատեսության քվիր բովանդակությունը մեծապես սահմանափակվել է սերիալներով, հումորային հաղորդումներով, որոնք ոչ թե կատակել են LGBTQ+ թեմաներով, այլ անարգել, ծաղրի առարկա դարձրել այդ մարդկանց, **հասարակության մեջ ամրապնդել կարծրատիպերը**, խթանել խտրականությունը, վերբալ և ոչ վերբալ բռնությունը: Վերլուծական, բանավիճային և այլ բնույթ ունեցող հաղորդաշարերը, որոնք կարող էին խորքային ու որակյալ բովանդակություն մատուցելով հակադրվել այս տեսակ մակերեսայնությանն ու լրացնել քվիր թեմաների տեղեկատվական բացը, մերժել ու բացարձակ լռության են մատնել ոչ նորմատիվ թեմաները՝ այսպիսով նպաստելով հասարակության լայն խմբերի անտեղյակությանն ու քվիր մարդկանց բացառմանը (exclusion):

Since 2006, Armenia has been participating in the annual Eurovision Song Contest organized and held by the European Broadcasting Union since 1955. Especially in the first years of participation, the contest provoked various intense discussions in the broad circles of the Armenian public.

The inevitability
of music
and variety

1955 թվականից ի վեր Եվրոպական
հեռարձակողների միության կողմից
կազմակերպվող և անցկացվող ամենամյա
«Եվրատեսիլ» երգի մրցույթին Հայաստանը
մասնակցում է 2006 թվականից: Հատկապես
մասնակցության առաջին տարիներին
մրցույթը հայաստանյան հանրության լայն
շրջանակներում տարատեսակ բուռն
քննարկումների առիթ էր դառնում:

Երաժշտության ու
բազմազանության
անխուսափելիությունը



Among the passionately discussed issues were the choice of participants and the transparency of the selection process, the nature of the song, as well as the pressures on the Azerbaijanis who voted for the Armenian participants back in 2010. The participation and victory of Conchita Wurst representing Austria in 2014 were particularly remarkable because it was the first time when a **queer person was presented** on Armenian television without being mocked. Due to the composition, a discussion on the topic of gender identity and sexuality got initiated. As the official broadcaster of the Eurovision Song Contest in Armenia, the Public Television of Armenia had no right to refuse to broadcast the performance of any participant, regardless of how the local jury members, commentators and some groups of the public felt about the singer's appearance in women's clothes, grooming and a man's beard. Thus, for many queer people living in Armenia, Conchita has become the first "strange" and openly non-normative character whom the Armenian television neither had the right nor the opportunity to reject or openly insult. Since the competition was already known to be a cause for heated discussions in Armenia, Conchita's participation and victory provoked conversations about gender identity and its manifestations in such circles of the society, where previously even a slight touch of such topics was unimaginable – family, newsletters, Facebook posts, live press conferences, etc. Many of those discussions



Խնդրո առարկա են հանդիսացել մասնակիցների ընտրությունն ու գործընթացի թափանցիկությունը, երգի ինչպիսին լինելը, ինչպես նաև 2010 թվականին Հայաստանի մասնակիցների օգտին քվեարկած աղբյուրացիների նկատմամբ ճնշումները: Առանձնակի ուշագրավ էին 2014 թվականին Ավստրիան ներկայացնող Կոնչիտա Վուրստի մասնակցությունն ու հաղթանակը, քանի որ դա առաջին դեպքն էր, երբ հայկական հեռուստատեսությունում **քվիր անձը ներկայացվեց** ծաղրական ժանրից դուրս: Մրցույթի շնորհիվ նաև սկիզբ դրվեց գենդերային ինքնության ու սեռականության թեմայի շուրջ քննարկման:

Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը՝ իբրև «Եվրատեսիլ» երգի մրցույթի պաշտոնական հեռարձակող, որևէ մասնակցի ելույթը եթեր չհեռարձակելու իրավունք չուներ՝ անկախ նրանից, թե տեղական ժյուրիի անդամները, մեկնաբանները և հասարակության որոշ խմբերն ինչպես էին վերաբերվում կանացի հագուստով, հարդարանքով և տղամարդու մորուքով երգչի արտաքին տեսքին: Այսպիսով Կոնչիտան Հայաստանում ապրող մի շարք քվիր անձանց համար դարձել է առաջին «տարօրինակ» ու բացահայտ ոչ նորմատիվ կերպարը, որին հայկական հեռուստատեսությունը ո՛չ մերժելու, ո՛չ էլ բացեիբաց ծաղրելու իրավունք ու հնարավորություն չի ունեցել: Քանի որ մրցույթն առանց այդ էլ թեժ քննարկումների թեմա էր Հայաստանում, Կոնչիտայի մասնակցությունն ու հաղթանակը գենդերային ինքնության և դրա դրսևորումների շուրջ գրույցներ հրահրեցին այնպիսի շրջանակներում, որտեղ նման թեմաների, նույնիսկ մակերեսային արծարծումը անհավանական ու անպատկերացելի էր թվում. ընտանիքում, լրատվամիջոցներում, ուղիղ հեռարձակվող ասուլիսներում,

continued to be based on discriminatory attitudes and hatred towards sexual/gender minorities, but the fact of raising the issue itself was **phenomenal and groundbreaking**.

“The only time that we discussed queer topics within the family was in 2014 when Conchita participated in Eurovision. My mom said that they would win, and she was right. It seems to me that it was stated in a homophobic way, but she also mentioned, that she had a good voice and the song itself was good too.”

“It all started with Conchita— the topic began to be discussed more and more. In 2014, when Conchita won Eurovision, fans in Armenia gave her 10 points, and she was in second place, whereas the jury, among whom were Inga and Anush, put her in last place. At that time, the average was deducted, and Conchita did not get any points from Armenia. Then the results were published. Inga and Anush said that Konchta has mental disorders. Then, if I’m not mistaken, they gave a live press conference on Radio Liberty on Facebook to explain themselves, and a lot of queer people started asking very sharp questions with their public/open profiles. “Irvunk” newspaper, in response to that, started writing articles about those people who criticized Inga and Anush and asked pointy questions to them. Personal information was published in a very nasty way, for example— whose father is or was imprisoned, what kind of background they have et cetera. If I remember correctly, about 16 people sued “Irvunk”, but they did not win the case, and it was sent to the ECHR. That was about 8 years ago. That lawsuit is still under investigation. If Armenia loses this case, it will be a great victory for the queer community of Armenia.”

Helle Porsdam and Ole Reitov authors of the “Cultural Rights Manual” [10] published by the Danish Cultural Institute noticed that the LGBTQ+ community’s love for the Eurovision Song Contest did not start with Conchita. The community has long found itself in the competition’s calls for unity, diversity, **freedom and love**, and yet Conchita’s victory was inspiring and decisive for many and a turning point for the queer community of Armenia.

Ֆեյսբուքյան գրառումներում և այլն: Այդ քննարկումներից շատերը շարունակում էին խտրական վերաբերմունք և ատելություն պարունակել սեռական/գենդերային փոքրամասնությունների նկատմամբ, սակայն հարցի արժարժման փաստն ինքնին **աննախադեպ էր և բեկումնային:**

«Միակ դեպքը, որ ընտանիքում քննարկել ենք քվիր թեմաները, 2014 թվականին էր, երբ «Եվրատեսիլում» մասնակցում էր Կոնչիտան: Մամաս ասեց, որ նա էլ կհաղթի, ու էդպես էլ եղավ: Ինձ թվում ա՛ դա ասվում էր հոռոֆոբ ձևով, բայց ասում էր, որ ամեն դեպքում ձայնն էլ էլավը, երգն էլ»:

«Կոնչիտայով սկսվեց էդ թեման ավելի ու ավելի շահարկել: 2014 թվականին, երբ Կոնչիտան հաղթեց «Եվրատեսիլը», Հայաստանում հեռուստադիտողը 10 միավոր էր տվել, այսինքն՝ երկրորդ տեղում էր, իսկ Ժյուրին, որի անդամ էին նաև Ինգան ու Անուշը, իրեն վերջին տեղն էին գցել: Էն ժամանակ միջին էր հանվում, ու Կոնչիտային Հայաստանից միավոր չտվեցին: Հետո նոր հրապարակվեցին արդյունքները: Ինգան ու Անուշն ասել էին, որ Կոնչիտան հոգեկան շեղումներ ունի: Հետո, եթե չեմ սխալվում, «Ազատություն» ռադիոկայանով ֆեյսբուքյան ասուլիս տվեցին, որ արդարանան, ու տենց ինչ-որ լիքը քվիր մարդիկ սկսեցին սենց ահավոր սուր հարցեր տալ՝ բաց հաշիվներով: «Իրավունք» թերթը, դրան ի պատասխան, հոդվածներ սկսեց գրել էն մարդկանց մասին, ովքեր քննադատել էին Ինգային ու Անուշին ու հարցեր գրել: Հոդվածներում նշվում էր այդ թվում էդ մարդկանց անձնական կյանքի մասին: Շատ կեղտոտ ձևով անձնական տվյալներ էին հրապարակվում, ասենք՝ ում հերն ա նստել կամ նստած, ով ինչ background ունի և այլն: Եթե ճիշտ եմ հիշում՝ մոտ 16 հոգի դատի տվեցին «Իրավունքին», դատը չշահեցին, էդ գործն ուղարկեցին ՄԻԵԴ: Դա մոտ 8 տարի առաջ էր: Էդ գործը հլը քննման փուլում ա: Եթե Հայաստանն էդ գործը պարտվի, դա մեծ հաղթանակ կլինի Հայաստանի քվիր համայնքի համար»:

Դանիական մշակութային ինստիտուտի հրատարակած «Մշակութային իրավունքներ» [10] ձեռնարկի հեղինակներ Հելլե Փորսդամը և Օլե Ռեիթովը նկատել են, որ ԼԳՏԻՔ+ համայնքի սերը «Եվրատեսիլ» երգի մրցույթի նկատմամբ Կոնչիտայով չի սկսվել: Համայնքն իրեն վաղուց է գտել մրցույթի միասնության, բազմազանության, **ազատության և սիրո կոչերում,** և, այդուամենայնիվ, Կոնչիտայի հաղթանակը շատերի համար ոգեշնչող և որոշիչ էր, իսկ Հայաստանի քվիր համայնքի համար՝ շրջադարձային:

It is difficult to imagine the internal questions, searches and discoveries of queer people without the influence of media and culture, access to which has had not only enlightening but also “liberating” significance for queer people. In particular, thanks to the availability of the Internet, many of our interviewees became aware of LGBTIQ+ topics for the first time, “met people like them”, and found answers to their questions no longer by chance but by consciously looking for them. From searching for questions that have never been asked to parents to secretly finding pornographic materials, dating sites and finally trying to find a community.

How did shrinking screens lead to increased freedom?

Դժվար է պատկերացնել քվիր անձանց ներքին հարցադրումները, որոնումներն ու բացահայտումները, առանց մեդիայի և մշակույթի ազդեցության, որոնց հասանելիությունը ոչ միայն լուսավորչական, այլև «ազատագրող» նշանակություն է ունեցել քվիր անձանց համար: Մասնավորապես՝ ինտերնետի մատչելիության շնորհիվ մեր զրուցակիցներից շատերը առաջին անգամ, հիմնականում արտասահմանյան աղբյուրներից, իրազեկվել են LQFSԻՔ+ թեմաների շուրջ այլևս ոչ թե պատահականության արդյունքում, այլ գիտակցաբար փնտրել ու գտել են իրենց հարցերի պատասխանները, հանդիպել «իրենց նման մարդկանց»: Ծնողներին երբեք չտված հարցերի որոնումներից մինչև պոռնոգրաֆիկ նյութերի թաքուն հայթայթում, ծանոթության կայքեր ու, ի վերջո, համայնք գտնելու փորձեր:

Թե ինչպես է կրանների փոքրացումն ազատության մեծացման բերեց

Along with the spread of the Internet, the media has gradually moved from an offline to an online environment, but the freedom brought by the Internet has not led to the variety of topics covered in the media. Most of the participants of the “Queer Memory in Armenia” research project stated, that the Internet was their first and/or **main source of raising awareness and self-education**, but they found the information they needed not in the media but in foreign as well as local informative sources created and developed by non-governmental organizations doing advocacy on LGBTIQ+ issues in Armenia.

“I learnt it all by myself, thanks to the Internet, and after — personal contacts, personal experiences of queer people in Armenia. At that time, there were few Armenian sources, let’s say there was something written in 3-4 lines, now we have increased it quite a lot. I was mainly getting information in English.”

“ It was not the way it is today— people did not have smartphones, internet, or contacts. Seriously, I remember times, when we used to send porn to each other by IrDA: we used to fill our balance with 100 AMD and download low-quality porn for 20 AMD”.

“ At the age of 16-17, when we were already living in Yerevan, I had an access to the internet and knew the places of porn sites, gay porn sites, and live video chats, where mostly male users masturbate. I used to check those websites as I wanted to talk with other folks, I wanted to communicate **with people like me** because there were no people with whom I could connect on these topics offline.”

Ինտերնետի տարածմանը զուգընթաց, լրատվամիջոցներն աստիճանաբար անցանցից տեղափոխվել են առցանց տիրույթ, սակայն ինտերնետի բերած ազատությունը չի հանգեցրել մեղիայում արծարծվող թեմաների բազմազանությանը: «Քվիր հիշողությունը Հայաստանում» հետազոտության մասնակիցներից շատերը նշեցին, որ ինտերնետը եղել է իրենց իրազեկության բարձրացման և **ինքնակրթության առաջին և/կամ հիմնական աղբյուրը**, սակայն իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը գտել են ոչ թե լրատվամիջոցներում, այլ Հայաստանում ԼԳՏԻՔ+ հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված ու մշակված նյութերում և արտասահմանյան աղբյուրներում:

«Ինքս եմ ուսումնասիրել համացանցի, հետո արդեն՝ քվիր մարդկանց կենսափորձին ծանոթանալու, անձնական շփումների միջոցով: Էն ժամանակ հայերեն աղբյուրները քիչ էին, կար ինչ-որ մի բան՝ 3-4 տողով գրած, հիմա բավականին շատացրել ենք մենք: Ես հիմնականում անգլիալեզու ինֆորմացիա էի ուսումնասիրում»:

«Էն ժամանակ հիմիկվա նման չէր, որ բոլորն ունենային սմարթֆոններ, ինտերնետ, կոնտակտներ: Լուրջ, I remember times, երբ մենք պոռնոն իկապոռնտով փոխանցում էինք իրար, 100 դրամ գցում էիր, տենց 20 դրամով վատ պոռնո էիր քաշում»:

«16-17 տարեկանում, երբ արդեն ապրում էինք Երևանում, ինտերնետ կար, պոռնո կայքերի տեղը գիտեի, գեյ պոռնո կայքերի տեղը գիտեի ու նաև live video chat-երի տեղը գիտեի, որտեղ հիմնականում արական սեռի ներկայացուցիչները մաստուրբացիա են անում: Մտնում էի էդ կայքերն ու ուզում էի շփվել ինչ-որ մարդկանց հետ, **ինձ նմանների հետ** էի ուզում շփվել, որովհետև չկային մարդիկ, որոնց հետ տես-ա-տես կարող էի շփվել էս թեմաների շուրջ»:

In the process of research, it was interesting to notice that before digital technologies and access to the Internet, queer people's memories were formed through visual and audio forms and genres of culture. Later on, the Internet and technology provided additional tools to recognize, that the literature has addressed queer themes way earlier, but was significantly less represented in mass culture.

Literature left outside
of the textbooks

Հետազոտության ընթացքում հետաքրքիր էր նկատել, որ մինչև թվային տեխնոլոգիաների և ինտերնետի հասանելիությունը քվիր մարդկանց հիշողությունները ձևավորվում էին մշակույթի վիզուալ և աուդիո ժանրերի միջոցով: Հետագայում ինտերնետը և տեխնոլոգիաները տալիս են լրացուցիչ գործիքներ ճանաչելու գրականությունը, որը առավել վաղ է անդրադարձել քվիր թեմաներին, սակայն զանգվածային մշակույթում ունեցել է զգալիորեն պակաս ներկայացվածություն:

Դասագրքերից դուրս
մնացած գրականություն

From Virginia Woolf, Remarque, Sylvia Plath, and Susan Sontag to the unpublished poems of Yeghishe Charents and Ghazaros Aghayan's fairy tale "Aregnazan" – queer topics, although sometimes hidden and unnoticeable, were touched upon in the works of both international and Armenian writers. In the case of Armenian literature, touching queer themes is especially typical of contemporary writers. If some authors still do not openly address these kinds of issues and their perception remains at the sensory level, then such writers as Armen of Armenia (Ohanyan), Zhan-Chat (Hovhannes Tekgyozian), Christian Batikian not only include queer topics and characters in their writings but often build a whole story around it. In this regard, the participants of the "Queer Memory in Armenia" research project remembered and mentioned "Mommyland: Flag" (2015) and "Mommyland: Anthem" (2020) by Armen of Armenia, Hovhannes Tekgyozyan's "Fleeing City" (2012) and "Skinache" (2013), "Superheroes die in the summer" (2016), and "Metal dreams" (2018). Most of the contemporary Armenian writers are part of the LGBTIQ+ community, they are directly connected with the readers, who are their friends, listeners, sympathizers and relatives. These writers are people who, despite the danger of being targeted and its possible consequences, **turn into a queer voice**, and raise issues that gradually go beyond narrow community circles.

"Writer Armen of Armenia is open, he has written books about it. I am sure that for some people who write, it is important to have him as a role model, someone who is open and has achieved great success in his field. My friend told me about "Mommyland: Flag", I read and liked it a lot. It was cool to read about queer topics in Armenian".

"Remarque helped a lot to understand my queer identity. I don't know how. "Arch of Triumph" was the book that changed everything. It helped me to understand that I should not live a secret life, hide, or kill my emotions and desires. Let me live in secret, but live. It is obvious to me that reading that book got me out of the swamp of those senseless questions. Two years ago I read it again to understand the reason. It seems to me that it has to do with the narrative, where the main character had complex relationships and was constantly fighting within himself.

From Armenian literature, Hovhannes Tekgyozyan, oh my goodness, he is an "honorary gay" for me, seriously. How he used to walk in the streets. It was at the youth forum back in 2015, that I first saw him. It went without saying, that he s gay — the way he moved, hid mimicry, gestures, intonation. When Facebook was still not very popular in Armenia and only certain circles used it, he was highly criticized by

Վիրջինիա Վուլֆից, Ռեմարկից, Սիլվիա Փլաթից, Սյուզան Սոնթագից մինչև Եղիշե Չարենցի չհանրայնացված պոեմներ ու Ղազարոս Աղայանի «Արեգնազան» հեքիաթ. քվիր թեմաները, թեև երբեմն քողարկված ու աննշմար, բայց շոշափվել են թե՛ համաշխարհային, թե՛ հայ գրողների ստեղծագործություններում: Հայ գրականության պարագայում քվիր թեմաների շոշափումը հատկապես բնորոշ է ժամանակակից գրողներին: Եթե որոշ հեղինակներ դեռևս ակներև չեն անդրադառնում այս տեսակ հարցերին, և վերջիններիս ընկալումը շարունակում է մնալ զգայական մակարդակում, ապա այնպիսի գրողներ, ինչպիսիք են Արմեն Հայաստանցին (Օհանյան), Ժան-Շան (Հովհաննես Թեքզոյան), Քրիստիան Բատիկեանը ոչ միայն իրենց պատումներում քվիր թեմաներ և կերպարներ են ներառում, այլև հաճախ ողջ պատումը կառուցում են դրա շուրջ: Այս առումով, «Քվիր հիշողությունը Հայաստանում» հետազոտական նախագծի մասնակիցները մտաբերել և հիշատակել են Արմեն Հայաստանցու «Մայրենիք դրոշմ» (2015) ու «Մայրենիք հիմնը» (2020), Հովհաննես Թեքզոյանի «Փախչող քաղաքն» (2012) ու «Մաշկացավը» (2013), Քրիստեան Բատիկեանի «Սուփոր հերոսները կը մեռնին ամրանն» (2016) ու «Մետաղէ երագները» (2018):

Ժամանակակից գրողներից շատերը ԼԳՏԻՔ+ համայնքի մաս են, անմիջական կապի մեջ են ընթերցողների հետ՝ նրանց ընկերն են, ունկնդիրը, կարեկիցը և բարեկամը: Նրանք մարդիկ են, որոնք չնայած թիրախավորվելու վտանգին և դրա հավանական հետևանքներին **վերածվում են քվիր ձայնի**, բարձրացնում հարցեր, որոնք աստիճանաբար դուրս են գալիս նեղ, համայնքային շրջանակներից:

«Գրող Արմեն Հայաստանցին բաց ա, գրքեր ա գրել էդ մասին: Ես վստահ եմ, որ ինչ-որ մարդկանց համար, ովքեր գրում են, կարևոր ա ունենալ իր օրինակը, ով կայացած ա իր ոլորտում ու բաց: Ընկերներս են ասել «Մայրենիք դրոշի» մասին, կարդացել եմ, շատ եմ հավանել: Հավես էր հայերենով կարդալ քվիր թեմայով»:

«Ռեմարկը շատ օգնեց հասկանալ քվիր ինքնությունս: Չգիտեմ ոնց: «Հաղթական կամարն» ա եղել էդ գիրքը: Օգնեց հասկանալ, որ ես չպիտի ծպտյալ կյանքով ապրեմ, թաքցնեմ, սպանեմ իմ հույզերն ու ցանկությունները: Թող թաքուն ապրեմ, բայց՝ ապրեմ: Ինձ համար ակնհայտ ա, որ էդ գրքի ընթերցանությունն ա ինձ հանել ճահճից, էդ անխմաստ հարցադրումներից: 2 տարի առաջ նորից կարդացի, որ հասկանամ պատճառը: Ինձ թվում ա՝ ընդհանուր սյուժեն, որ գլխավոր հերոսը կռիվներ էր տալիս ինքն իր մեջ, իր ստացված ու չստացված բարդ հարաբերությունները:

«Հայ գրականությունից՝ Հովհաննես Թեքզոյանը, մեռնեմ ջանին, իմ համար նա «պատվավոր գեյ» ա, լուրջ եմ ասում: Նա ո՞նց ա փողոցում քայլել: Ես իրան առաջին անգամ տեսել եմ 2015 թվականին երիտասարդական ֆորումի ժամանակ, որտեղ նա ակնհայտ ասում էր, որ գեյ ա: Բռաջցի չէր խոսում դրա մասին, բայց շարժուձևը, միմիկան, ժեստերը, ինտոնացիան: Երբ որ Ֆեյսբուքը դեռ նոր էր մտնում Հայաստան

them. First I read his “Skinache”. I adore his writings, I had never read anything like that before. I also liked his “Third Sex” a lot, because it portrays the life of the theatre. It is good that he has chosen such a title, it works so well”.

“When I think about Armenian queer culture, the first thing that comes to mind is contemporary art. For me, writings by Aram Pachyan, Armen of Armenia, [Christian] Batikian can also be perceived as queer, but I know all those people which is very worrying for me. I would also like there to be someone whom I don’t know personally, I would like them to be part of history already. Recently, we were discussing with friends whether Ghazaros Aghayan’s “Aregnazan” is a text with a trans metaphor or not, and we concluded that it is not even a metaphor, but an obvious disclosure of gender/ sexual identity”.

Despite the fact, that none of the participants mentioned academic articles and research papers, when thinking about queer literature, when searching for the words “queer” and “Armenia” in scientific platforms, we found out that the significant yet few works on the topic were mostly done in the same period: 2010–to the present day.

These texts usually have an interdisciplinary approach and touch queerness in the framework of Armenian identity, diasporan studies, feminism, post-colonialism, sexuality et cetera and are mostly written in English. In this sense, this booklet created as a result of the **“Queer memory in Armenia” project is the first one** that looks at the topic through the lens of memory and presents it in both Armenian and English languages.

ու հատուկ շրջանակների համար էր, իրեն շատ էին քվեում: Առաջին անգամ կարդացել եմ իր «Մաշկացավը»: Ինձ իր գրականությունը շատ ա դուր գալիս, տենց բան մինչև էդ չէի կարդացել: Իրա «Երրորդ սեռն» էլ եմ շատ-շատ հավանել, որովհետև թատրոնի կյանքի մասին ա, ու լավ ա արել, որ տենց անուն ա դրել, շատ լավ ա արել»:

«Հայկական քվիր մշակույթի մասին մտածելիս առաջին բանը, որ մտքիս գալիս ա, ժամանակակից արվեստն ա: Իմ համար Արամ Պաշյանի տեքստերն էլ կարող են քվիր ընկալվել, [Արմեն] Հայաստանցունն էլ, [Քրիստիան] Բատիկեանինն էլ, բայց էդ բոլոր մարդկանց ես անձամբ ճանաչում եմ, ինչը շատ մտահոգիչ ա: Ես կուզեի նաև մարդիկ լինեին, որոնց ես չեմ ճանաչում: Կուզեի չճանաչել, որ իրենք արդեն լինեին պատմություն: Մենք էս վերջերս ընկերներով քննարկում էինք՝ արդյոք Ղազարոս Աղայանի «Արեգնազանը» տրանս մետաֆորայով տեքստ ա, թե՛ չէ, ու մեր եզրակացությունն էն էր, որ դա, ամեն դեպքում, տրանս փոխաբերություն ա, նույնիսկ փոխաբերություն չի, շատ ուղիղ՝ գենդերային ինքնության բացահայտման մասին ա»:

Թեև քվիր թեմաների շուրջ գրավոր աշխատություններ մտաբերելիս մասնակիցներից որևէ մեկը գիտական և հետազոտական աշխատանքներ չմտաբերեց, սակայն ակադեմիական հարթակներում «քվիր» և «Հայաստան» բառերը որոնելիս պարզեցինք, որ թեմայի շուրջ իրականացված խիստ կարևոր, բայց սակավաթիվ աշխատանքները հիմնականում արվել են նույն ժամանակաշրջանում՝ 2010-ականներից մինչև մեր օրեր: Այս աշխատանքները վերաբերում են քվիր ինքնությանը, վերջինիս՝ հայկական/հայաստանյան իսկության մաս լինելուն, սփյուռքին, ֆեմինիզմին, հետզադուրթատիրությանը, սեռականությանը ու հիմնականում գրված են անգլերեն լեզվով: Այս իմաստով **«Քվիր հիշողությունը Հայաստանում» նախագծի արդյունքում ստեղծված այս գրքույկն առաջինն է,** որը շոշափում է հիշողության թեման և այն ներկայացնում հայերեն և անգլերեն լեզուներով:

DIY was a gay-friendly club co-founded by musician Tsomak (Armine Oganezova), located in one of the central streets of Yerevan. In May 2012, early in the morning, brothers Arameh and Hambik Kharabyans broke the window of the club and threw explosives, as a result of which the club was almost completely set on fire.

Blown up
silence

DIY ակումբը երաժիշտ Ծոմակի (Արմինե Օգանեզովա) համահիմնադրած gay-friendly ակումբ էր, որը գտնվում էր Երևանի կենտրոնական փողոցներից մեկում: 2012 թվականի մայիսին՝ վաղ առավոտյան, Արամեի և Համբիկ Խարաբյան եղբայրները կոտրել են ակումբի պատուհանը ու պայթուցիկ նետել, ինչի հետևանքով ակումբը գրեթե ամբողջովին հրկիզվել է:

Պայթեցված
լռություն



Although the cameras installed in the club recorded everything, and the brothers themselves did not hide their identity and the homophobic motives of the committed act, the judicial system of the Republic of Armenia did not consider the **incident as a hate crime**. The youngsters were first released in exchange for the signature and the bail paid by the ARF deputies who were part of the RA government at that time, later on – granted amnesty, thus not spending a single day of the 1 year and 7 months sentence in prison. The issue of a terrorist attack on the club became relevant again in August 2022, when the European Court of Human Rights ruled that the Republic of Armenia failed to protect the rights of DIY's co-founder Tsomak and did not conduct a fair trial of the case.

This terrorist act carried out on the basis of discrimination and hatred was not a unique case, but it was the first one that was covered by the mass media and became the subject of discussions not only by the LGBTIQ+ community, activists and public organizations but even by political figures. The accident has been covered by the mass media representatives such as Cvlnet.am, lin.am, Aravot. Hetq, 168.am, Azatutyun.am (Radio Liberty Armenia), Lragir.am, Blognews.am, A1+, Hraparak.am, Mediamax, Armenian Times daily et cetera. Epress.am was the only one, that not only covered the event itself but also

Թեև ակումբում տեղադրված տեսախցիկներն արձանագրել են ողջ եղելությունը, իսկ եղբայրները չեն էլ թաքցրել իրենց ինքնությունն ու կատարած արարքի հոմոֆոբ դրոպապատճառները, Հայաստանի Հանրապետության դատական համակարգը դեպքը չի դիտարկել իբրև **ատելության հիմքով իրականացված հանցագործություն**։ Երիտասարդները նախ ազատ են արձակվել ստորագրությամբ և այն ժամանակ ՀՀ իշխանության մաս կազմող ՀՅԴ-ական պատգամավորների վճարած գրավի դիմաց, պապ համաներման հիմքով ազատվել՝ սահմանված 1 տարի 7 ամիս պատժից ոչ մի օր չանցկացնելով բանտում։ Ակումբի պայթեցման թեմային կրկին անդրադարձ եղավ 2022 թվականի օգոստոսին։ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ Հայաստանի Հանրապետությունը ծախողել է ակումբի համահիմնադիր Ծոմակի իրավունքների պաշտպանությունն ու չի իրականացրել գործի արդար դատաքննություն։

Խտրականության և ատելության հիմքով իրականացված այս ահաբեկչական ակտը եզակի դեպք չէր, սակայն առաջինն էր, որ լուսաբանվեց զանգվածային մեդիայի կողմից, դարձավ ոչ միայն LQFSHՔ+ համայնքի, ակտիվիստների և հասարակական կազմակերպությունների, այլև՝ ընդհուպ քաղաքական գործիչների քննարկումների առարկա։ Դեպքին այս կամ այն կերպ անդրադարձել են այնպիսի զանգվածային լրատվամիջոցներ, ինչպիսիք են Civilnet.am-ը, 1in.am-ը, «Առավոտը», «Հետքը», «Ազատություն» ռադիոկայանը, Womennet.am-ը, henaran.am-ը, 168.am-ը, Lragir.am-ը, Blognews.am-ը, A1+ը, Hraparak.am-ը, Medi-amax-ը, «Հայկական ժամանակ» օրաթերթը և այլն, իսկ Epress.am-ը, այն եզակի լրատվամիջոցն էր, որը ոչ միայն իրադարձային անդրադարձ է կատարել, այլև տարիներ շարունակ հետևողականորեն լուսաբանել է գործին առնչվող ցանկացած թեմա և զարգացում։ Սա աննախադեպ իրադարձություն էր հայկական մեդիայի և հայաստանյան քվիր պատմությունում, այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ այն բեկումնային ու անջնջելի հետք թողեց քվիր անձանց հիշողության մեջ։ Թեև «Քվիր հիշողությունը Հայաստանում» հետազոտության մասնակիցների հիմնական մասը մինչև 30 տարեկան երիտասարդներ են, հարցազրույցների ընթացքում նրանցից յուրաքանչյուրը որևէ կերպ հիշատակել է DIY ակումբի պայթեցումը։ Ոմանք մտաբերում էին լրատվամիջոցների լուսաբանումը, որ հիմնականում մակերեսային լինելով հանդերձ, **քվիր թեմայի անդրադառնալու եզակի օրինակ** էր։ Մյուսները հիշում են իրենց շրջապատող մարդկանց վերաբերմունքն այդ դեպքի վերաբերյալ, մի քանիսն էլ՝ իրենց ներքին հոմոֆոբիային հաջորդող շփոթմունքն ու «անսպասելի» հարցադրումները, որ սեփական ինքնությունը գիտակցելու, ընդունելու և սիրելու դժվարին ճանապարհի սկիզբը դարձան։

Ակումբի պայթեցումը մտաբերելիս մեր հետազոտության մասնակիցների հիշողություններից առանձնացրել ենք երեք առանցքային թեմատիկ ուղղություն՝ առաջին անգամ մեդիայի կողմից նման թեմայի լուսաբանումը, շրջապատի արձագանքը կատարվածին՝ որպես առհասարակ քվիր անձանց նկատմամբ վերաբերմունքի ցուցիչ, և Ծոմակի կերպարը՝ որպես ոչ միայն դեպքի տուժող կողմ, այլ նաև որպես հանրության կողմից հստակորեն նույնականացված առաջին քվիր կերպար, արվեստագետ, ով տրավմատիկ իրադարձությունների արդյունքում դուրս եկավ ընդհատակյա նեղ շրջանակներից և առավել տեսանելի դարձավ քվիր

consistently wrote about any topic and development related to the case for years. This was an outstanding event not only in the queer history of Armenia, but also media, so it is not surprising that it left a groundbreaking and indelible mark in the memory of our respondents. Although the majority of the “Queer Memory in Armenia” research project’s participants were young people under 30 years old, during the interviews, each of them somehow recalled the attack on the DIY club. Some of them mentioned media coverage, which, despite being mostly shallow, was a **unique example of addressing queer topics**. Others remembered the attitude of the people around them regarding that incident, their confusion, “unexpected” questions and inner homophobia, which lead to the difficult path of realizing, accepting and loving their own identity. When recalling the bombing of the club, we identified three key thematic patterns from the memories of our participants: the media covering such a topic for the first time, the attitude of the society on the incident as an indicator of the perspective on queer people in general, and the image of Tsomak as not only the victim but also as the first openly queer public figure, an artist who, as a result of traumatic events, came out of the shadow and became more visible to queer people thus inspiring them not to be afraid to be themselves.

“I remember that during the bombing of the DIY, the interpretation was that “some gay-friendly place was blown up”. I had a friend whose brother was in some “nazi” black metal band that was involved with the incident. She said, that it is good, that it happened. My first reaction was that it was not ok, but I did not understand much. I knew that at least nothing good had happened.”

“I was 11-12 years old when the attack on DIY took place. At that time I already had doubts, and my mother tried her best to force me to stay away from them. At that time I had massive internal homophobia. On the one hand, I had homophobia, which came from the fact that everyone around me was happy about the attack, but at the same time, I had a very strange desire to find out more about it, to consider that perhaps everything is not as I see it. Now that I look back, I think that the reason behind was that I somehow viewed myself as part of it all. It seems to me that my homophobia came from the people who raised me when I was young, and also from the media and educational system. **It is very difficult not to be a homophobe** when everything and everyone around you is that way, when such [LGBT] things are either not talked about, or— in a bad way. I had never heard of DIY until the incident.

անձանց համար, ոգեշնչեց նրանց չվախենալ բացահայտել և ցուցադրել սեփական ինքնությունը:

«Հիշում եմ, որ DIY-ի պայթեցման ժամանակ ինֆորմացիան նենց էր ֆռում, որ ինչ-որ գեյերի տեղ են պայթացրել: Ընկերուհի ունեի, որ խխպերն ինչ-որ նացիկ black metal քենդում էր, որն ինչ-որ կապ ուներ էդ ամենի հետ ու ասում էր, որ լավ ա եղել: Իմ առաջին ռեակցիան էն էր, որ էդ ok չի, բայց շատ բան չէի հասկանում: Գիտեի, որ как минимум լավ բան չի եղել»:

«Ես դեռ 11-12 տարեկանում, նույն DIY-ի ժամանակ իմ մեջ ունեի կասկածներ, ու մամաս ինձ, մեծ հաշվով, ամեն ձև ստիպում էր դրանից հեռու մնալ: Էն ժամանակ ես ունեի շատ մեծ internal հոմոֆոբիա: Մի կողմից ունեի հոմոֆոբիա, որը զալիս էր նրանից, որ իմ շուրջ բոլորն ասում էին, որ լավ ա եղել, ինչ որ եղել ա, բայց դրա հետ մեկտեղ ինձ մոտ ինչ-որ շատ տարօրինակ ցանկություն կար տեսնելու, թե էդ ինչ ա, մտածելու, որ գուցե ամեն ինչ նենց չի, ոնց ես տեսնում եմ: Հիմա որ հետ եմ նայում, մտածում եմ, որ էդ ամեն ինչը կարող ա նրանից էր, որ ես պատկերացնում էի, որ գուցե ես էդ ամեն ինչի մի մասն եմ: Ինձ թվում ա՝ իմ հոմոֆոբիան զալիս էր փոքր տարիքում ինձ մեծացրած ու նաև մեծ տարիքում ինձ հետ առնչված մարդկանցից, մեդիայից, կրթությունից: **Շատ դժվար ա չլինել հոմոֆոբ**, երբ շուրջ ամեն ինչ հոմոֆոբիայի մասին ա, երբ դրա [LGBT-ի] մասին կամ չի խոսվում, կամ խոսվում ա վատ ձևով: Մինչև DIY-ի պայթացնելը ես DIY-ի մասին չէի լսել: Էն ժամանակ Ծոմակին ու էդ ամբողջ պատմությունն իմ համար շատ անհասկանալի էին: Հետո տարիներ անցան, ես իմացա էդ ամբողջ պատմությունը, իմացա, թե ոնց ա էդ ամեն ինչն եղել ու նաև S-pichka-ի երգերը լսեցի, ինձ համար էդ ամենը դարձավ շատ ավելի հասկանալի, պարզ ու քվիր»:

«2012 թվին, որ նոր էի եկել [Ռուսաստանից], լուրերով Ծոմակին տեսել էի, շատ էի հիացել իրենով: DIY-ի ժամանակներն էին, ու էդ նորությունը մեդիայում տեսնելն ինձ համար շատ կարևոր էր: Չեմ հիշում, թե ինչ էին ասում, ինքն ինչ էր ասում, բայց հիշում եմ, որ իր կերպարը շատ հետաքրքիր էր ինձ, սենց immediate գրավչություն էր»:

DIY-ը պարզապես ակումբ չէր, այն քվիր մշակույթ կրող, բազմազանությունը, արտասովորությունն ու ըմբոստությունն ընդունող ու քաջալերող եզակի գաղափարական հավաքատեղ էր, ուր մարդիկ ունեին հնարավորություն ազատ և ներդաշնակ լինել իրենց ինքնությամբ: Սա հասկանում ու գիտակցում էին ոչ միայն Հայաստանում քվիր համայնքի ներկայացուցիչները, այլև՝ ազգայնական գաղափարների հարող եղբայրներն ու իրենց համախոհները, ովքեր հենց այս տեսակ մշակույթին, արժեքներին և դրանց տարածմանը դեմ գնալու նպատակով են իրականացրել և/կամ սատարել տեղի ունեցած ահաբեկչական ակտը:

At that time, Tsomak and the whole story were very incomprehensible to me. Then years passed, when I learned the whole story, figured out how it all happened and also listened to S-pichka's songs, it all became much more understandable, simple and queer for me."

"In 2012, when I had just returned [from Russia], I had seen Tsomak on the news and admired her very much. Those were the times of DIY, and seeing this news in the media was very important for me. I don't remember how they presented it, what did she say, but I remember that her character was very catching to me, it was sort of an immediate attraction."

DIY was not just a pub, it was a unique ideological place that promoted queer culture, accepted and supported diversity, uniqueness and rebellion, where people had the opportunity to gather, demonstrate the freedom and be in harmony with their identities. This was clear not only for the representatives of the queer community in Armenia but also for the nationalist brothers and their supporters, whose acts were aimed at cancelling queer culture and its distribution.

As a result of the hateful act, Tsomak was forced to emigrate from Armenia, but she continued her ideological path through music, art and other cultural activities. The interviewees of the "Queer Memory in Armenia" research project recalled listening to the songs of the S-pichka band for the first time and thinking about the matters raised by them with different emotional embodiments.

"S-pichka formed by Tsomak was very inspirational for me. I watched the movie "Listen to me" and heard the song "Soviet Baby" there for the first time. In my opinion, they were a turning point in Armenian LGBT history."

Ծոմակը ակումբի գործունեության ավարտից հետո հարկադրաբար արտագաղթեց Հայաստանից, սակայն իր գաղափարական ուղին շարունակեց երաժշտական արվեստի և մշակութային գործունեության միջոցով: «Քվիր հիշողությունը Հայաստանում» հետազոտության մասնակիցները հուզական տարբեր դրսևորումներով էին մտաբերում S-pichka խմբի երգերն առաջին անգամ լսելն ու դրանց արժարժած հարցերի շուրջ մտածելը:

«Ծոմակենց Սպիչկան շատ ոգևորող ա իմ համար: «Լսիր ինձ» ֆիլմը նայեցի, էստեղ առաջին անգամ լսեցի Soviet Baby երգը: Ինձ թվում ա՝ **իրենք շրջադարձային են եղել հայկական ԼԳԲՏ պատմության մեջ»:**

Most of the participants named a few musicians that they saw/perceived as queers, such as Zemfira, Freddie Mercury, Verka Serdyuchka, Philip Kirkorov, TaTu, Lady Gaga, Madonna, Shprot, and Ruben Matevosyan, however, mostly electronic is the form of music that is not only queer in nature but also has a liberating significance for the LGBTIQ+ community.

The liberating
phenomenon
of electronic
music

Հետազոտության մասնակիցներից շատերը
իրենց կողմից քվիր ընկալված/ընկալվող
մի քանի երաժիշտների անուններ տվեցին,
ինչպիսիք են Ջեմֆիրան, Ֆրեդի Մերկուրին,
Վերկա Սերոյուչկան, Ֆիլիպ Կիրկորովը,
TaTu խումբը, Լեդի Գագան, Մադոննան,
Շարօտը և Ռուբեն Մաթևոսյանը, սակայն մեծ
մասամբ էլեկտրոնայինն է երաժշտության
այն ձևը, որը ոչ միայն քվիր բնույթ, այլև
ազատագրող նշանակություն ունի ԼԳԲՏԻՔ+
համայնքի համար:

Էլեկտրոնային
երաժշտության
ազատագրող
ֆենոմենը



Electronic music oftentimes creates the physical and non-physical environment, where **queer identity can be freely expressed**. Therefore, it is no surprise that the Armenian queer subculture was mostly formed and developed in the realm of electronic music: from the underground and constantly suppressed events of the 90s and early 2000s to the Tatanum chamber of one of the ordinary clubs in the centre of Yerevan in the mid-2010s, and nowadays – Poligraph, a club, where electronic music events are being organised regularly, a space, that rejects borders and hate speech, breaks internal and external barricades.

“Such culture has always existed in Armenia. It was there since the 90s, but there were no investors interested in funding such a culture. It was not acceptable for the Kocharyan’s regime, because it liberates, and gives space to the youth for self-expression”.

“I listened to electronic music a lot before I turned 18. I did my first steps by listening to metal, and then a musical evolution happened. At that time metal was dying already by 2016 it was already dead. Until I was 18, I listened [to electronic music] a lot, but I did not understand that much. I remember the first time I encountered that music and it

Հաճախ էլեկտրոնային երաժշտությունն է դառնում ֆիզիկական և ոչ ֆիզիկական այն տարածքի ստեղծողը, որտեղ **ազատորեն կարող է դրսևորվել քվիր ինքնությունը**: Այսպիսով պատահական չէ, որ հայաստանյան քվիր ենթամշակույթը մեծ մասամբ ձևավորվել և զարգացել է էլեկտրոնային երաժշտության տիրույթում. 90-ականների և վաղ 2000-ականների ընդհատակյա և պարբերաբար ճնշվող միջոցառումներից մինչև 2010-ականների կեսերին Երևանի կենտրոնում գտնվող սովորական ակումբներից մեկի «Տատանում» սենյակ ու մեր օրերում քվիրը բացեիբաց սատարող «Պոլիգրաֆ» ակումբ, որտեղ էլեկտրոնային երաժշտությունը մերժում է սահմաններն ու ատելության խոսքը, ազատում ներքին ու արտաքին կապանքներից:

«Էդ մշակույթը [Վայաստանում] միշտ եղել ա, 90-ականներից եղել ա, բայց էդ մշակույթի մեջ investor-ներ չկային, էդ մշակույթի մեջ փող չկար, էդ մշակույթն ընդունելի չէր քոչարյանական ռեժիմի կողմից, որովհետև ինքն ազատագրող մշակույթ ա, ինքը երիտասարդությանը տարածք ա տալիս ինքնարտահայտվելու»:

«Մինչև 18-ս electronic music շատ-շատ էի լսում, դրա առաջին քայլերը մետալից ա սկսվել, երաժշտական էվոլյուցիա ա եղել: Մետալը մեռնում էր էդ ժամանակ Երևանում, արդեն մեռած էր, էդ արդեն 2016 թիվն էր:

gave me a **liberating spark**. I remember me sitting on the speakers all night, with no clue on what was going on, why was the music so loud, so noisy. That's how I suddenly started to understand that feeling, from which another feeling arose. When I turned 18, I was already able to travel by myself, and I can say that 80 per cent of my travel in Europe and the Middle East was club tourism”.

“I think there is a queer culture in Armenia now. For example, there are parties, we have already had several queer ones. The culture of electronic music has developed a lot in Armenia and many of our folks are involved in producing electronic music. Those parties are the places where people are so queer.”

No wonder, when talking about safe spaces, most of the participants of our research project mentioned the very places where electronic music is played and similar events are organized such as the Poligraph, Office, et cetera.

Մինչև 18-ս շատ էի լսում, բայց էդքան շատ չէի հասկանում: Տիշում եմ, որ առաջին անգամ տենց բախվեցի էդ music-ի հետ ու ազատագրող կայծ ինձ տվեց: Սաղ գիշեր նստում էի բուֆերների վրա, չէի հասկանում, թե ինչ ա կատարվում, խի ա օօօժաբ տենց բարձր, տենց շուխուր: Տենց սկսեցի շատ պատահական հասկանալ էդ feeling-ը, տենց մի հատ ուրիշ տենց feeling սկսվեց ըտեղից: Որ 18-ս լրացավ, արդեն կարողանում էի մենակով travel անել, ու կարամ ասեմ, որ իմ travel-ի 80 տոկոսը Europe ու Middle East եղել են club tourism»:

«Ինձ թվում ա՝ հիմա կա քվիր մշակույթ: Օրինակ՝ փարթիներ են լինում, արդեն մի քանի անգամ քվիր փարթիներ ենք ունեցել: Էլեկտրոնային երաժշտության մշակույթը շատ ա զարգացել Տայաստանում, և մեր երեխեքից շատերը զբաղվում են էլեկտրոնային երաժշտությամբ: Էդ փարթիներն էն տեղերն են, որտեղ մարդիկ so queer են լինում»:

Պատահական չէ, որ ապահով տարածքների մասին խոսելիս մեր հետազոտության մասնակիցներից շատերը նշեցին հենց այն վայրերը, որտեղ հնչում է էլեկտրոնային երաժշտություն, և կազմակերպվում են նմանօրինակ միջոցառումներ՝ Poligraph-ը, Office-ը և այլն:

Time and people define space. Although it is initially understood from the authoritative role of architecture, urban planning and politics, later on, it can be reinterpreted by different groups of society and/or the public, who bring culture and transform the nature of the space with their presence. Queer people living in Armenia have always had limited spaces to demonstrate their identity and let alone to queer and redefine the external borders. The bond between the internal and external is still fragile, as there are very few openly queer-friendly spaces, thus – no environment that would allow one to feel confident, safe and harmonious enough for queering Armenia.

Queer spaces:
out of sight,
in front of all

Տարածությունը սահմանում են
ժամանակն ու մարդիկ: Թեև այն
ի սկզբանե իմաստավորվում է
ճարտարապետության, քաղաքաշինության
և քաղաքականության իշխանական դիրքից,
այնուամենայնիվ հետագայում այն կարող
է վերաիմաստավորվել հասարակության և/
կամ հանրության տարբեր խմբերի կողմից,
որոնք իրենց ներկայությամբ մշակույթ են
թելադրում և վերափոխում տարածության
բովանդակությունը: Հայաստանում
ապրող քվիր անձինք ի սկզբանե
սահմանափակ տարածքներ են ունեցել
իրենց ինքնությունը բացահայտելու և ապա՝
արտաքին սահմանները տարօրինակելու
և վերաիմաստավորելու համար: Ներսի
ու դրսի շաղկապը դեռևս փխրուն է,
քանի որ սակավ են բացահայտ queer
friendly տարածքները, և բացակայում է
միջավայրը, որ թույլ կտար բավականաչափ
ինքնավստահ, ապահով ու ներդաշնակ
զգալ՝ Հայաստանը տարօրինակելու համար:

Քվիր տարածքներ.
բոլորի աչքից հեռու,
բոլորի աչքի առաջ

Since 2008, a group of artists, writers, cultural critics and workers initiate perceiving Yerevan as an experimental space and queering it. From the beginning, “the task of the collective has been to disturb habitual perception by rendering the familiar in unfamiliar terms in order to slow down automated perception [11]”. Through happenings and acts, critical and experimental texts, photography and conceptual art, the initiative questions and queers both online and offline spaces. The art created by the members of the group is not just “aesthetic food”, but an instrument to liberate, transform and give meaning to physical and ideological spaces. The members of the initiative do this through various creative means: they run a blog available for everyone on the Internet, create collections and conduct performances, one of the most impressive of which was the kiss of queer people in front of the National Security Building of Armenia back in June 2016.

The queerization of Armenia as a physical space continues to be the result not so much of the queer movement as such, but – the efforts of individuals and groups to this day. Accordingly, it is due to individuals and groups, that certain places transform and/or achieve queer nature, even if it is not known and/or visible to/by other people. When talking about queer spaces in Armenia, most of our respondents remembered cruising spots, but those were not the only and even the main queer spaces impressed in their memories. From the DIY pub to the rooftops, from NGO offices to electronic music events, from parks and gardens of Yerevan to forests, from their own house to the places of friends and acquaintances, and even churches – all kinds of spaces that have been queered even for the short period of time can be considered as queer.

“I remember, that when I started attending college, the only safe place where I felt more or less safe was Molokan’s Park, which was located directly behind my college. Many Molokans were doing what they did every day: running, exercising, et cetera. I have always felt weird. Their strangeness had nothing to do with mine, but in any case, I felt OK among people who were fine with being outsiders.”

The personal experience mentioned above, on the one hand, illustrates how those who spent their time in a certain space transform its identity and even rename it. In many cases, it is difficult to identify who has done it, but such wording indicates the negative manner and sense towards these groups hanging in the air. On the other hand, the example of “Molokan’s Park” shows that queerness is not limited to the context of sexuality, and the more diverse and multicultural the space, the safer it is for queer people and other groups in society to

2008 թվականներից ի վեր մի խումբ արվեստագետներ, գրողներ, մշակութային քննադատներ և գործիչներ Երևանը սկսեցին դիտարկել իբրև փորձարարական տարածք ու տարօրինակել այն: Արվեստային այս յուրօրինակ նախաձեռնությունը հենց այդպես էլ կոչվում էր՝ Queering Yerevan | «Տարօրինակելով Երևանը»:
Կոլեկտիվի խնդիրն ի սկզբանե «Ծանոթ ու անծանոթ տերմինների միջոցով սովորույթի վրա հիմնված ընկալումների ցնցումն էր՝ նպատակ ունենալով դանդաղեցնել ավտոմատացված ըմբռումը» [11]: Տեղի ունենալիքի (հեփընինգի) և ակտի, քննադատական ու էքսպերիմենտալ տեքստերի, լուսանկարչության և կոնցեպտուալ արվեստի դրսևորումների միջոցով նախաձեռնությունը խնդրականացնում ու տարօրինակում է թե՛ առցանց, թե՛ անցանց տարածքները: Խմբի անդամների ստեղծած արվեստը պարզապես էսթետիկ կերակուր չէ, այլ՝ ֆիզիկական և գաղափարական տարածքների ազատագրման, ձևափոխման և իմաստավորման միջոց: Խմբի արվեստագետներն այդ անում են տարբեր ստեղծարար միջոցներով՝ համացանցում բոլորին հասանելի բլոգ են վարում, կազմում են ժողովածուներ և հանդես գալիս փերֆորմանսներով, որոնցից ամենատպավորիչներից մեկը 2016 թվականի հունիսին Հայաստանի ազգային անվտանգության ծառայության շենքի դիմաց քվիր անձանց համբույրն էր:

Հայաստանի՝ իբրև ֆիզիկական տարածության տարօրինակումը սակայն մինչև օրս շարունակում է ոչ այնքան քվիր շարժման, որքան անհատների և խմբերի ջանքերի արդյունք լինել, ուստի հաճախ հենց այդ մարդիկ և իրենց ստեղծած, փոփոխած ու իմաստավորած տարածքներն են ընկալվում որպես քվիր, նույնիսկ եթե այդ հանգամանքը հայտնի և/կամ տեսանելի չէ այլ մարդկանց համար/կողմից:

Հայաստանում քվիր տարածքների մասին խոսելիս մեր գրուցակիցներից շատերը մտաբերեցին cruising spot-ները, սակայն դրանք նրանց հիշողություններում տպավորված միակ և նույնիսկ հիմնական քվիր տարածքները չէին: DIY ակումբից մինչև տանիքներ, ՀԿ-ներից մինչև էլեկտրոնային երաժշտության միջոցառումներ, անտառներ, երևանյան պուրակներ ու այգիներ, սեփական տնից մինչև ընկերների ու ծանոթների տներ ու նույնիսկ եկեղեցի. քվիր են այն բոլոր տարածքները, որոնք թեկուզ կարճ ժամանակով եղել են տարօրինակված:

«Երբ սկսեցի քոլեջ գնալ, հիշում եմ, որ միակ ապահով տեղը, որտեղ ինձ քիչ թե շատ ապահով էի զգում, կոչվում էր Մոլոկանի այգի, իմ քոլեջի ուղիղ հետևում էր: Ընդեղ մոլոկաններ էին, որոնք անում էին էն, ինչ ամեն օր էին անում՝ վազում էին, մարմնամարզություն էին անում և այլն: Ես ինձ միշտ զգացել եմ տարօրինակ: Իրանց տարօրինակությունն իմ տարօրինակության հետ էղբան կապ չունեի, բայց ամեն դեպքում ես ինձ Ok էի զգում մարդկանց մեջ, ովքեր Ok էին, որ իրանք շատ outsider են»:

Փորձառության այս օրինակը մի կողմից ցույց է տալիս, թե ինչպես են տարածությունը իրացնողները վերափոխում դրա ինքնությունը և նույնիսկ վերանվանում այն: Հաճախ դժվար է հասկանալ, թե ովքեր են «անվանակոչման» հեղինակները, բայց օդում կախված են բացասական երանգն ու ենթատեքստը, որ

express themselves. In the process of collecting one of the oral stories in the framework of this project, when talking about his favourite queer spaces, one of our interviewees described how much he likes being invisible while being in the crowd. Although there is some progress in Armenia due to the efforts of the LGBTIQ+ community, and many participants of our project even half-jokingly, half-seriously noted that Yerevan and Armenia are queer from head to toe, safe spaces continue to be “hidden and out of sight”. These are mostly private places: offices of organisations advocating LGBTIQ+ rights, community and resource centres, rented homes of queer people or their acquaintances, et cetera. In the case of public/open spaces, the information about the queerness of such places is secret, known only to narrow circles of society. Such a unique example is the roof of one of the cinemas in Yerevan and the roofs of Yerevan in general, the queerness of which is solely based on the experience of queer people there. The city that is seen from those rooftops, however, continues to **exclude queer people from the urban space** to a large extent, for their strangeness, restricts different groups of society simply to be represented.

նման ձևակերպումների միջոցով ցույց է տալիս հասարակության վերաբերմունքն այս խմբերի հանդեպ: Մյուս կողմից՝ «Մոլոկանի» այգու օրինակը ցույց է տալիս, որ քվիրը չի սահմանափակվում սեռականության կոնտեքստում, և որքան զանազան ու բազմամշակույթ է տարածությունը, այնքան ապահով է այն քվիր մարդկանց և հասարակության այլ խմբերի դրսևորման համար:

Բանավոր պատմությունների հավաքագրման օրինակներից մեկի ժամանակ, իր սիրելի քվիր տարածքների մասին խոսելիս, մեր գրուցակիցներից մեկը նկարագրեց, թե ինչպես է, բոլորի մեջ լինելով հանդերձ, անտեսանելի զգում իրեն, և որքան է դա իրեն դուր գալիս: Թեև ԼԳԲՏԻՔ+ համայնքի ջանքերի շնորհիվ Հայաստանում կա որոշակի առաջընթաց, և մեր գրուցակիցներից շատերը նույնիսկ կեսկատակ-կեսլուրջ նշում էին, թե Երևանն ու Հայաստանը ոտքից գլուխ քվիր են, սակայն ապահով տարածքները շարունակում են «թաքուն ու բոլորի աչքից հեռու մնալ»: Սրանք հիմնականում փակ տարածքներ են՝ ԼԳԲՏԻՔ+ անձանց շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների գրասենյակներ, համայնքային և ռեսուրսային կենտրոններ, քվիր անձանց կամ նրանց ծանոթների վարձակալած տներ և այլն: Հանրային/բաց տարածքների պարագայում նման վայրերի քվիր լինելու մասին տեղեկատվությունը գաղտնի է, հասանելի բացառապես հասարակության նեղ շրջանակների: Նման ունիկալ օրինակ են Երևանի կինոթատրոններից մեկի տանիքն ու առհասարակ Երևանի տանիքները, որոնց քվիր լինելը բացառապես հիմնված է քվիր անձանց՝ այդ տեղին առնչվող փորձառության հետ: Այդ տանիքներից երևացող քաղաքը սակայն շարունակում է մեծապես **արտամղել իրեն տարօրինակող քվիր անձանց քաղաքային տարածությունից**, թույլ չտալով ներկայացվածություն ունենալ հասարակության տարբեր խմբերում:

Within the framework of the project, our team has prepared a questionnaire for in-depth interviews in advance. We tried to form the chain of questions in such a way that each following question would bring us closer to the phenomenon of queer memory.

Afterwards

Նախագծի շրջանակներում իրականացվող
խորքային հարցազրույցների համար
մեր թիմը նախապես պատրաստել էր
հարցաթերթ: Մենք փորձել էինք հարցերի
շղթան կառուցել այնպես, որ ամեն հաջորդող
հարցադրումը առավել մոտեցնի մեզ քվիր
հիշողություն երևույթին:

However, during the first interview, it became clear that the subject was much more comprehensive than we planned, and our questionnaire began to be completed. Each of the participants revealed new perspectives and thematic pathways to what we might call queer memory. Our methodology got further enriched throughout the interviews. We have learned not only new perspectives of queer culture in Armenia but also new methodological features of working with memory in general. Through each biographical story, it was revealed that the process of formation of queer memory in Armenia is no different from a similar experience in other countries – it is almost always traumatized. The trauma is the threshold that each of the interviewees has crossed in the past. During the interviews, they had to return to the most complex time and space of their past, which made our work difficult and extremely responsible. If memory is a fragile phenomenon then **queer memory is doubly fragile** and subject to external persecution and pressure. One of the features of queer memory in Armenia, which we can distinguish at this stage of our work, is the interweaving of the phenomenon with other traumatic experiences of the Armenian community. As such we can emphasise the Armenian-Azerbaijani conflict and the two Karabakh wars, which have made our country vulnerable in the last thirty years. The war and succeeding militarization led to the rooting of a patriarchal discourse that marginalizes queer culture in general. The consequences of the first Karabakh war, the everlasting edgy situation in the country, the four-day war of 2016 and finally the catastrophic war of 2020 have left scars in the memories of almost every participant.

Other forms of memory entangled with queer identity are migration and repatriation. Forced labour migration caused the outflow of an entire generation, therefore the queer identity of many of the interviewees was formed far from Armenia. In their stories about the past, they regularly compared the Armenian queer culture and environment with what they discovered as a result of the migration.

An extreme amount of sensitivity was required not to overwhelm the local queer community with one's rich experience and notions of rights and freedoms.

Another red line that runs through all of the stories regards the urban space. Queer people are literally pushed out of the city, deprived of public space itself and the right of publicity in space. During the previous decades, the situation only worsened as a result of transformations and gentrification of the urban environment – **the city completely got rid of queer places** and became as translucent and adjusted to the life of a heteronormative society as possible. The

Սակայն առաջին իսկ զրույցի ընթացքում պարզ դարձավ, որ թեման նախատեսվածից շատ ավելի ընդգրկուն էր, և հարցաշարը սկսեց համարվել: Մասնակիցներից յուրաքանչյուրը բացահայտեց նոր դիտանկյուններ և թեմատիկ ուղիներ այն երևույթի մասին, ինչը մենք կարող ենք անվանել քվիր հիշողություն: Մեր մեթոդաբանությունը հարցազրույցների ողջ ընթացքում առավել հարստացավ: Բացահայտեցինք ոչ միայն քվիր մշակույթի նոր հայեցակետեր Հայաստանում, այլև առհասարակ հիշողության հետ աշխատելու նոր մեթոդաբանական առանձնահատկություններ:

Կենսագրական յուրաքանչյուր պատումի միջոցով բացահայտեցինք, որ Հայաստանում քվիր հիշողության ձևավորման գործընթացը ոչնչով չի տարբերվում այլ երկրների նմանօրինակ փորձից, այն գրեթե միշտ տրավմատիզացված է: Տրավման այն շեմն է, որը նախագծի մասնակիցներից յուրաքանչյուրը հատել է անցյալում: Եվ հարցազրույցներում նրանք ստիպված եղան վերադառնալ սեփական անցյալի բարդագույն ժամանակաշրջանին ու տարածությանը, ինչը դարձրեց մեր աշխատանքը դժվարին և առավելագույնս պատասխանատու: Եթե հիշողությունը փխրուն երևույթ է, ապա **քվիր հիշողությունը կրկնակի փխրուն է** և ենթակա արտաքին հավածանքների ու ճնշումների:

Հայաստանում քվիր հիշողության առանձնահատկություններից մեկը, որը աշխատանքի այս փուլում կարող ենք առանձնացնել, երևույթի միահյուսումն է հայ հանրության այլ տրավմատիկ փորձառությունների հետ: Նմանօրինակ տրավմաներից կարելի է ընդգծել հայ-ադրբեջանական հակամարտությունը և Ղարաբաղյան երկու պատերազմները, որոնք վերջին երեսուն տարիներին խոցելի են դարձրել մեր երկիրը: Պատերազմը և դրան հաջորդած ռազմականացումը հանգեցրին պատրիարխալ դիսկուրսի կարծրացմանը, որը առհասարակ դուրս է մղում քվիր մշակույթը: Ղարաբաղյան առաջին պատերազմի հետևանքները, երկրում անվերջանալի լարված իրավիճակը, 2016-ի Քառօրյա պատերազմը և, վերջապես, 2020-ի ադետալի պատերազմը սպիներ են թողել զրուցակիցներից գրեթե յուրաքանչյուրի հիշողություններում:

Քվիր ինքնության հետ միահյուսված հիշողության այլ ձևեր են միգրացիան և հայրենադարձությունը: Հարկադիր աշխատանքային միգրացիան պատճառ դարձավ մի ամբողջ սերնդի արտագաղթի, այդ պատճառով հարցվածներից շատերի քվիր ինքնությունը ձևավորվել է Հայաստանից հեռու: Անցյալի մասին իրենց պատմություններում նրանք պարբերաբար համեմատության մեջ էին դնում հայկական քվիր մշակույթն ու միջավայրը և միգրացիայի արդյունքում բացահայտածը: Հետազոտության մասնակիցների մյուս մասը, ընդհակառակը, ոչ թե լքել է երկիրը, այլ եկել է այստեղ՝ բերելով LQFS+ համայնքի իրավունքների, մշակույթի և կյանքի մասին իր պատկերացումները: Երկու դեպքում էլ բանասացները առերեսվել են գաղութայնացման փորձառությանը: Գաղութայնացումն ու ռասիզմը, որին Ռուսաստանում բախվեցին հայ քվիր համայնքի անդամները, խոր հետք թողեցին մի ամբողջ սերնդի վրա: Բարդ աշխատանք էր նաև Հայաստանում քվիր հայրենադարձների կենսագործունեությունը: Ծայրահեղ զգայունություն էր պահանջվում տեղի քվիր

issue of oppression of urban space revealed another element of queer memory in Armenia – queer people tended to leave the city, isolate themselves in nature, and hide in a dungeon or on the roofs of high-rise buildings. Decades of heteronormalization of urban space have also led queer people to move to a digital space almost completely, where they feel safe and free. It was in these circumstances that queer memory was formed in Armenia.

We are grateful to each and every participant of the “Queer Memory in Armenia” project, and to all the interviewees who trusted us with their stories and agreed to our share them with us. We also want to thank Pink Armenia for all their efforts and work they do for queer people, and especially for their decision to support our project. We would also like to express our gratitude to our colleague, expert, and cultural anthropologist Eviya Hovhannisyan for her helpful advice and comments. This is just the beginning of our research on this subject. The Cultural and Social Narratives Laboratory intends to continue to explore this complex and multidimensional issue from different perspectives, through such works we contribute to making our society more aware, caring and open.

Mariam, Arsen and Tigran

համայնքին սեփական հարուստ փորձով և իրավունքների ու ազատությունների մասին պատկերացումներով չհեղեղելու համար:

Բոլոր պատմություններում կարմիր գծի պես անցնում է ևս մի կարևոր թեմա՝ քաղաքային տարածությունը: Քվիր մարդիկ բառացիորեն դուրս են մղված քաղաքից՝ զրկված լինելով հանրային տարածությունից և տարածությունում հանրայնության իրավունքից: Նախորդող տասնամյակների ընթացքում քաղաքային միջավայրի վերափոխումների և ջենտրիֆիկացիայի արդյունքում իրավիճակը միայն սրվեց՝ **քաղաքը վերջնականապես զրկվեց տարօրինակված վայրերից** և դարձավ հնարավորինս թափանցիկ ու հարմարեցված հետերոնորմատիվ հասարակության կյանքին: Քաղաքային տարածության ճնշումների թեման բացահայտեց Հայաստանում քվիր հիշողության ևս մեկ առանձնահատկություն. քվիր մարդիկ հակված էին հեռանալ քաղաքից, մեկուսանալ բնության զրկում, թաքնվել զնդանում կամ բարձրահարկերի տանիքներին: Քաղաքային տարածության տասնամյակներ շարունակվող հետերոնորմալացումը հանգեցրել է նաև քվիր մարդկանց գրեթե ամբողջական արտահոսքի դեպի թվային տարածք, որտեղ իրենց առավել ապահով և ազատ են զգում: Հենց այսպիսի պայմաններում է Հայաստանում ձևավորվել քվիր հիշողությունը:

Մենք շնորհակալ ենք նախագծի մասնակիցներից յուրաքանչյուրին, բոլոր բանասացներին, որոնք վստահեցին մեզ իրենց պատմությունները և համաձայնեցին մեր հարցազրույցներին: Նաև ուզում ենք շնորհակալություն հայտնել Pink Armenia-ին՝ երկար տարիների աշխատանքի, Հայաստանում քվիր մարդկանց աջակցության և հատկապես մեր նախագծին սատարելու որոշման համար: Ցանկանում ենք նաև երախտագիտություն հայտնել մեր գործընկեր, փորձագետ, մշակութային մարդաբան Էվիյա Հովհաննիսյանին արժեքավոր խորհուրդների և մեկնաբանությունների համար: Մեր հետազոտությունը այս թեմայի շուրջ ուսումնասիրությունների սկիզբն է միայն: «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիան» մտադիր է շարունակել տարբեր դիտանկյուններից հետազոտել այս բարդ և բազմաչափ խնդիրը, քանի որ հավատում ենք, որ նմանօրինակ աշխատանքների միջոցով դարձնում ենք մեր հանրությանը առավել իրազեկ, հանդուրժող և բաց:

Մարիամ, Արսեն և Տիգրան

Notes

- 1 **Assmann, A.** (2011).
Der lange Schatten der Vergangenheit: Erinnerungskultur und Geschichtspolitik.
CH Beck, p. 24.
- 2 **Cvetkovich, A.** (2003).
3 Sexual Trauma/Queer Memory: Incest, Lesbianism, and Therapeutic Culture.
In *An archive of feelings* (pp. 83-117). Duke University Press, p.351-371.
- 3 **Rousseau, G. S.** (1981).
Herculine Barbin. Being the recently discovered memoirs of a nineteenth-century hermaphrodite, introduced by Michel Foucault, translated by Richard McDougall,
Brighton, Sussex, Harvester Press, 1980, 8vo. *Medical History*, 25(2), 211-212.
- 4 **Çalışkan, D.** (2019).
Queer postmemory.
European Journal of Women's Studies, 26(3), 261-273
- 5 **Richardson, M.** (2013).
The queer limit of Black memory: Black lesbian literature and irresolution.
The Ohio State University Press.
- 6 Dictionary, O. E. (1989).
Oxford english dictionary. Simpson, Ja & Weiner, Esc, 3.
- 7 **Foucault, M.** (1975).
Discipline and punish.
A. Sheridan, Tr., Paris, FR, Gallimard.
- 8 **Artmika** (2012, May 9th, Hate Crime: DIY bar in Armenia capital Yerevan under neo-nazi arson attack. *Ubzipped: Gay Armenia.* <https://gayarmenia.blogspot.com/2012/05/hate-crime-diy-bar-in-armenia-capital.html>
- 9 *Media Consumpton and Media Coverage of Reforms in Armenia.-*
Caucasus Research Resource Center Armenia for Media Initiatives Center, Yerevan., 2019. https://www.crc.am/wp-content/uploads/2019/03/MICE-Report-2019_.pdf
- 10 **Porsdam H., Reitov O.**
Cultural Rights Manual.
Danish Cultural Institute, 2022, p.118.
- 11 **Der Boghossian J.P.** (2021 Feb 9),
Queering Yerevan,
The Queer Armenian Library, <https://queerarmenianlibrary.com/queering-yerevan/>

Queer Memory in Armenia explores and analyzes the multi-layered and delicate topic of queer memory for the first time in Armenia. By collecting and studying oral stories, the authors of the book address matters such as the development of identity, the transformation of places over time, the representation of non-hetero-normative topics and characters in media and culture, et cetera.

The study aims to widen the very narrow thematic scope of memory studies and present the characteristics of queer culture that has been formed in Armenia in recent decades.

Այս աշխատությունն առաջին անգամ Հայաստանում ուսումնասիրում և վերլուծում է քվիր հիշողության բազմաշերտ ու նուրբ թեման: Գրքույկի հեղինակները բանավոր պատմությունների հավաքագրության ու մեկնության միջոցով անդրդառնում են այնպիսի թեմաների, ինչպիսիք են ինքնության ձևավորումը, ժամանակի ընթացքում փոփոխվող տարածքները, մեդիայում և մշակույթում ոչ հետերոնորմատիվ թեմաների ու կերպարների ներկայացվածությունը և այլն:

Հետազոտությունը միտված է ընդլայնելու հիշողության ուսումնասիրությունների խիստ սահմանափակ թեմատիկ շրջանակներին ու ցույց տալու վերջին տասնամյակներում Հայաստանում ձևավորված քվիր մշակույթի առանձնահատկությունները:



CULTURAL
& SOCIAL
NARRATIVES
LABORATORY